

ԳՅՈՎԵԼԵՔԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐՎԱՆԻ ԳՐԵԿՅԱՆ

Ուրարտական տերութիւնի վերջին շրջանի արձաններից մեկ են հասել սակավաթիվ, գերազանցապես կաղապարային բնույթի արձանագրութիւնները՝ նրանց գործունեութիւնի մասին հաղորդելով չնչին տեղեկութիւններ: Այս առումով անակնկալ էր Ռուսա էրիմենայորդու (Ռուսա III)¹ ծավալուն արձանագրութիւնի հայտնաբերումը Արևմտյան Հայաստանի էրմանց գյուղից (էրմանիս, այժմ՝ Գյովեյեք)²՝ Վան քաղաքից 26 կմ արևելք: Արձանագրութիւնը պահպանվել է երկու բեկորների վրա, որոնք մաս են կազմել երբեմնի միասնական կոթողի նվազագույնը 2 մ բարձրութիւնով: Հուշարձանն արձանագրվել է երկու կողմից, որոնք տարբերակում ենք համապատասխանաբար «Դիմային կողմի» (Դկ I, Դկ II) և «Հակառակ կողմի» (Հկ I, Հկ II):

Արձանագրութիւնի առաջիկ միակ հրատարակութիւնը պատկանում է իտալացի ուրարտագետ Միլոյո Սալվինիին³: Մեր գիտարկումները, սակայն, վեր հանեցին ընթերցումների ճշգրտման և նոր մեկնաբանութիւնների դիմելու անհրաժեշտութիւնը՝ ստիպելով վերստին անդրազանալու առաջին հրատարակութիւնը:

Գիտական տառադարձում

Դկ I

1. ^dhal-di-ni-ni al-su-i-si-ni
2. EN-si-ni-ni iš-te-di ^mru-sa-ni
3. ^me-ri-me-na-hi ^dhal-di-e-i ^LERUM
4. ^dhal-di-ni-ni uš-ma-ši-ni EN-si-ni-ni
5. a-lu-uš-me sü-i-ni e-si-i-ni mu-ši
6. ú-e-še-la-a-še ú-e-ši-i-gi
7. a-lu-uš-me tu-bar-du-ni ú-bar-du-gi

¹ Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН). Ереван, 2001, № 434-444.

² Տե՛ս Հայաստան եւ Հարեւան երկիրները ըստ Լինչի եւ Օսեալդի քարտեզը (իմք. եւ հրատ. Ա. Ա ր Ե Ղ Ե ա ն, Թիֆլիս, 1914): Գյուղի մերձակայքում պահպանվել են նաև ուրարտական ժամանակաշրջանին պատկանող Հին բնակատեղիի ավերակներ (M. T a n e r T a r h a n, V. S e v i n. Van bölgesinde Urartu arařtırmaları (I). Askeri ve sivil mimariye ait yeni gozlemler.— “Anadolu Arařtırmaları” (այսուհետև՝ An.Ar.), Cilt IV-V, 1976-1977, s. 295, lev. I: Բնակատեղին, սակայն, մի քանի այլ հնավայրերի հետ տեղ չի գտել Վ. Կլայսի և Հ. Հաուպտմանի կազմած «Ուրարտուի տեղագրական քարտեզ»-ում (W. K l e i s s, H. H a u p t m a n n, Topographische Karte von Urartu.— «Archäologische Mitteilungen aus Iran» (այսուհետև՝ AMI), Ergänzungsband 3, Berlin, 1976): Այս մասին տես S. B a ř a r a n, V. S e v i n-ի գրախոսութիւնը «Անատոլիական հետազոտութիւններ» հանդեսի էջերում (An.Ar., Cilt IV-V, s. 500):

³ M. S a l v i n i. Una Stele di Rusa III Erimenahi dalla zona di Van.— «Studi Micenei ed Egeo-Anatolici» (այսուհետև՝ SMEA), XLIV/1, 2002, p. 115-143: Այստեղ տես նաև արձանագրութիւնի հայտնաբերման մանրամասները (էջ 115, ծանոթ. 2):

8. a-lu-uš-me LUGÁL-tú-ḫi DAN.NU a-ru-ni
9. na-ḫa-di LUGAL-tú-ḫi-ni-na ^{GIS}GU.ZA te-ru-me
10. GIŠ LUGAL-tu-ḫi-ni-i sú-gu-ki us-ḫa-nu-me
11. u-e-še-la-še mu-si a-lu-ka-a
12. ú-e-ši-ja-ú-li PAP KUR.KUR^{MEŠ}
13. us-ḫa-nu-me ^dḫal-di-i-se EN-še
14. ḫu-tu-tu-ḫi gu-nu-še e-’a ip-šu-se
15. šu-i-ni-ni ú-ri-ni-i ^dḫal-di-ni-ni
16. ba-u-si-i-ni PAP u-ri-e
17. a-u-e-i-te-ni ši-u-bi
18. ^mru-sa-še ^me-ri-me-na-ḫi-ni-še
19. ^la^l-li ^{KUR}qi-il-ba-ni-ka-i KITM
20. qu-ul-di-ni ma-nu u-i gi-e-^ll

Դ/II

21. [ab-si-e-i GAN ^{GIS.SAM}ŠE ^{GIS}GESTIN ša-(a)-ri]
22. ma-nu-r[i?] ^lu-^l [PA₅ iš-ti-ni]
23. ^la^l-ga-ú-ri sú-kl^l [^dḫal-di-is-me]
24. i-zi-u-ni i-e-s[e za-du-(ú)-bi]
25. DAN.NU^{MEŠ} ar-ni-ú-{si-ni-(e)-li}
26. [i]š-ti-ni ^mru-sa-še a-li A^{MEŠ} še-ḫi-ri?
27. ^lKUR^lú-ra-i-dí ^{LÚ}A-bu? u[l-ḫu-ú-bi?]
28. ^lu^l-ru-bi i-ni su-i-ni-i e-s[i gu-ni]
29. [šú]-li ma-nu-še u-i gi-i ab-s[i-e-i]
30. ^lŠAM^lŠE iš-ti-ni ma-nu-ri pu-la-^lu^l-[e]
31. ^ll^l-si-na-ú-e a-ri-bu-ta-^lu^l?^l-[e?]
32. [i]s-ti-ni ma-nu u-i PA₅ a-ga-^lú^l-[ri]
33. ^lu^l-i ta-ar-ma-ni is-ti-ni m[a-nu-ri]
34. [ú-i a-i-se-i LUGAL^{MEŠ}-se za-da-la-ni (?)]

Հ/ I

1. a-ú-i-e LUGAL-še a-li-i-e
2. ul-ḫu-li-ni ^mru-sa-še a-li gu-ni
3. te-el-zu-še te-ru-bi a-še A^{MEŠ}
4. su-i-ni-ni ni-ki-du-li UDU.MÁŠ.TUR
5. ^dḫal-di-e ni-ip-si-du-li-ni GUD V UDU
6. ^dḫal-di-e TAG UDU.ŠE UDU ^dIM UDU.SE [UDU]
7. ^dUTU UDU.ŠE UDU ^da-ru-ba-n[i-e]
8. UDU.ŠE UDU DINGIR^{MEŠ} UDU.SE UDU ^dN^lIN^l
9. GUD ^mru-sa-i-ni-e ^dGI/DINGIR-gi?
10. ^{GUD}ÁB ^mru-sa-i-ni-e ^dNIN
11. ^{GUD}ÁB ^da-ni-qu-gi III UDU DINGIR^{MEŠ}
12. su-i-ni-ni UDU.SE UDU ^das-sur UDU.ŠE UDU
13. ^dna-la-i-ni-e UDU.SE UDU ^dqu-e-r^la^l
14. GUD UDU ^du-ra III UDU ^{ŠADU}ba-ba-na-ú-e
15. at-qa-na-na-ú-e i-ni-ni TAG-si
16. a-še A^{MEŠ} ni-ki-du-li a-še A^{MEŠ}
17. e-ši-a si-ú-li UDU.ŠE UDU ^dḫal-di-e
18. UDU ^dIM UDU ^dUTU UDU ^da-ru-ba-ni-e
19. UDU DINGIR^{MEŠ} UDU ^dNIN UDU ^mru-sa-i-ni-e
20. ^dGI/DINGIR-gi? UDU ^mru-sa-i-ni-e ^dNIN

Հ4 II

21. [UDU^da-ni-qu-gi UDU DINGIR^{ME5}su-ni-ni¹
22. [UDU^das-sur UDU] ^dna-la-ni-e
23. [UDU^dqu]-¹e¹-ra UDU^du-r¹a¹
24. [UDU^{SADU}ba-b]a-na-ú-e at-qa-na-na-u-e
25. [i-ni-li?] ^mru-sa-hi-na-i-di
26. [ur-bu-li]-ni? ^dhal-di-ni-ni us-ma-si-[ni?]
27. [^mru-s]a-ni ^me-ri(!)-me-na-hi LUGÁL DAN.N[U]
28. [LUGÁL^{KUR}bi]-¹a¹-i-na-ú-e a-lu-ki-ka-i
29. [^dha]l-di-se DINGIR^{ME5}-se tu-bar-du-ni-n[i]
30. [ú-ba]r-du-i LA? a-lu-ki e-¹a¹
- 31.
- 32.
- 33.

ԴԿ


1-3) Տեքստը սկսվում է ներածական բանաձևը ներկայացնող տողերով: Բանաձևը հանդիպում է նաև Թանահատի, Թոփուղավայի արձանագրությունների և վերջինիս երկրորդ կրկնօրինակի՝ Մովանայի կոթողներում⁴, արձանագրելով արքայի՝ Նալդի աստծո ծառան լինելու դրույթը (istedi ^mRusani ^mErimenahi ^dHaldiei ^{LU}ERUM): Հատվածը ենթակա է հստակ թարգմանություն, բացառություն istedi տերմինի, որի բովանդակության շուրջ կարծիքները տարամիտվում են. մասնադիտական դրականության մեջ սրան տրված (դեպի)-այստեղ⁵, այս կողմ(ը)⁶ թարգմանությունը⁵, որը չէր հակասում արքայական տարեգրությունների բովանդակությանը, ենթարկվել է վերանայման: Հետադոտողներից ոմանք istedi-ի համար առաջարկել են ես դերանունը⁶: Նման մոտեցումը թեև հակասության մեջ է մտնում ուրարտական տեքստերում երիցս հանդիպող և լավ փաստարկված iēse-ես անառարկելի նույնացման հետ, այնուամենայնիվ, ունի որոշակի հիմք⁷, ուստի և istedi-ի տակ դերանուն տեսնելու հնարավորությունը թվում է իրական:

⁴ КУКН, 387, урарт. текст, стк. 24 сл.; 411, стк. 15 сл. Մովանայի երկլեզու արձանագրությունը հրատարակվել է վերջերս Մ. Սալվինիի կողմից (B. A n d r é - S a l v i n i, M. S a l v i n i. The Bilingual Stele of Rusa I from Movana (West-Azerbaijan, Iran).— SMEA, XLIV/1, 2002, p. 7, ln. 5f.; p. 18, ln. 11f.):


⁵ КУКН, 411, прим. 18 и с. 450 (ište/idi).

⁶ C. G i r b a l. Selbständige Pronomina der ersten Person Singular im Urartaischen.— Th. Richter et al. (Hrsg.), “Kulturgeschichten. Altorientalistische Studien für Volkert Haas zum 65. Geburtstag”, Saarbrücken, 2001, S. 139-144; B. A n d r é - S a l v i n i, M. S a l v i n i.— SMEA, XLIV/1, p. 10. Նման հնարավորություն, սակայն, արտահայտվել է շատ վաղի վաղ: Հմտ. իուրր. ište-ն՝ նույն նշանակությունը (M. A. X a ч и к я н. Хурритский и урартский языки. Ереван, 1985, с. 49):

⁷ Ռուսա I-ի կազմած Թոփուղավայի և Մովանայի երկլեզու արձանագրությունների ասորեստանյան տեքստերի anaku՝ ես դերանվան ուրարտական համապատասխանությունը վերահիշյալ istedi-ն է: S b ' u C. G i r b a l. Նշվ. աշխ., էջ 140, ինչպես նաև B. A n d r é - S a l v i n i, M. S a l v i n i.— SMEA, XLIV/1, p. 7, ln. 5f.; p. 18, ln. 11f. (Urartian version); p. 22, ln. 52f. (Assyrian version): Սակայն այստեղ կարելի է նշել, որ ասորեստանյան ասորեերակը միշտ չէ նույնությունը կրկնում ուրարտական բնագիրը:



Նկ. 1 Դիմաշին կողմ



Նկ. 2 Հակառակ կողմ

Նամանավանդ, եթե նկատի ունենանք քննարկվող տողի՝ ուրարտական այլ արձանագրություններում առկա համապատասխանությունները⁸:

4-6) Նշված տողերը պարունակում են ուրարտական վիմագրություն մեջ սակավ հանդիպող արտահայտություններ⁹՝ հատկապես 5-6-րդ տողերում: Հետադոտողները գերադանցապես ձեռնպահ են մնացել դրանք իմաստավորելուց՝ չնայած բառապաշարի զգալի մասը ենթակա է մեկնաբանության և ունի որոշակի թարգմանություն: Հիմնական խոչընդոտը կապված է uesēlase uesigi արտահայտության հետ, ինչի մասին ստորև:

7) Գյուվելեքի կոթողի 4-րդ տողից սկսվում է մի շարք՝ ուրարտական դիցարանի գերագույն աստված Խալգիի կողմից արքային տրված իշխանություն և գրախորհրդանիշերի շնորհումով:

Արքայական իշխանությունը, նաև հին արևելյան պատկերացումներում, նույնացվում էր դահի, գայիսոնի և, իհարկե, թագի հետ¹⁰: Քննարկվող տեքստում հանգես են գալիս այս խորհրդանիշերից առաջին երկուսը և մեկ չմեկնաբանվող արտահայտություն՝ alusme tubarduni ubardugi-ն. չի բացահայտվում, որ այն իմաստավորի գերագույն աստծու կողմից արքայական իշխանության երրորդ խորհրդանիշի՝ թագի շնորհումը:

Իրոք, տարօրինակ կարող է թվալ թագ իմաստն արտահայտող բառի բացակայությունը ուրարտական տեքստերում (ոչ դադափարագիր և ոչ էլ հնչյունագիր (վանկագիր) տարբերակներով¹¹): Մինչդեռ տերություն արքաները կրել են խույր, որոնց տեսքի մասին կարող ենք դատել ուրարտական որմնանկարներում և բարձրաքանդակներում պատկերված օրինակներից. գրանք կրել են աստվածները¹²: Ահա թե ինչ է այս մասին ասվում ասորեստանյան սկզբնաղբյուրներից «Լուվրի աղյուսակ»-ում՝ Մուծածիրից տարված արժեքները թվարկելիս. «...մեկ պատկերաքանդակ Արգիշաիի՝ Ուրարտու (երկրի) արքայի, որը կրում է աստղազարդ խույր, նման՝ աստվածայինի...»¹³: Ըստ այդմ, նշված տեքստի AGA – թագ, խույր գաղափար

⁸ S6'u ԿHaldinini usmašini EN-sinini ԿRusaše ԿSardurihiniše ieše՝ Խալգյան գորությունը անբունական Ռուսան, Սարդուրուրիին ես (եմ), ինչպես նաև՝ ԿHaldinini usmasini ԿIspuiniše alie ԿSardurihiniše ieše՝ Խալգյան գորությունը անբունական Իչպուլինին ասում է. Սարդուրուրիին ես (եմ)՝ արտահայտությունները (Համապատասխանաբար՝ KYKH, 389, ցրկ. 1-2; KYKH, 20, ցրկ. I, ցրկ. 1-3 = ցրկ. II, ցրկ. 1-3, ցրկ. III, ցրկ. 1-3): Հմմտ. քննարկվող արձանագրության ԿHaldinini alsuisini EN-sinini ištēdi ԿRusani ԿErimenahi-ն:

⁹ Դրանց կրկնօրինակները հայտնի են միայն Արգիշտի Ռուսայորդու թողած Հադիի և Ջելեբի-բադիի վիմագրերից, որոնց հետ Գյուվելեքի արձանագրությունն ունի բազում ընդհանրություններ: Այս երեք հուշարձանների ընդհանուր հատվածների համադրությունը տե՛ս տրված աղյուսակում:

¹⁰ The Assyrian Dictionary (Chicago, 1956, vol. 6, H), hatu: Ic.

¹¹ Ուրարտական արձանագրություններից հայտնի է միայն kubuše՝ սաղապարտ բառը՝ նվիրատվական մի քանի արձանագրությունների բառապաշարից:

¹² Կ. Հ ո վ հ ա ն ի ս յ ա ն, Էրբուլնիի որմնանկարները. Երևան, 1973, աղ. 16, 46: U. S e i d l. Urartaische Bauskulpturen – In M. J. M e l l i n k, E. P o r a d a, T. Ö z g ü ç (eds.). "Aspects of Art and Iconography: Anatolia and its Neighbours, Studies in Honor of Nimet Özgüç". Ankara, 1993, S. 557-564, Taf. 98-99, և այլուր:

¹³ W. M a y e r. Sargons Feldzug gegen Urartu-714 v.Chr.: Text und Übersetzung.– "Mitteilungen der Deutschen Orient- Gesellschaft" (այսուհետև՝ MDOG), Heft 115, 1983, S. 108-109 (Z. 402). Ուրարտական արքաների կրած խույրի մասին նույն աղբյուրը պահպանել է ևս մեկ հիշատակում (տես ստորև):

րագիրը¹⁴ համադրում ենք ուրարտական սեպագրի tubarduni բառին՝ թագ¹⁵, խուլյր¹⁶, ապարոշ¹⁷ մոտավոր թարգմանությամբ¹⁸: Ինչ վերաբերում է մասնագիտական դրականության մեջ tubarduni-ի բայ լինելու ընդունված մոտեցմանը, ապա հարկ է վերանայել այն¹⁶: Նույն տողում հանդես եկող ubardugi-ն (տրբ. ubar(a)dujali) թարգմանվում է կամեցավ, ինչն առավել ընդունելի մոտեցում է (Համտ. šuki ^{GU}Haldise ubaradujali-ն՝ ինչպես Խալգի (ասսվածը) կամեցավ թարգմանությամբ): Ըստ այդմ, 7-րդ տողում արձանագրված միտքը կարելի է թարգմանել որը-ինձ թագ¹⁹ կամեցավ իմաստով:

Գյուվելեք	Հաղի	Չելեբի-բաղի
ԴԿ	ԴԿ	ԴԿ
1-3	≈ 14-16	≈ 11-13
4-12	17-30	14-23
13-15	31-34	23-25
18-23	≈ 35-42	≈ 26-31
23-26	≈ 43-45 [...]	≈ 31-35
ՀԿ	ՀԿ	ՀԿ
4-8	---	x+...
9-10	---	6-7
16-20	---	25-33

8-9) Այս տողերը ենթակա են բավական հստակ թարգմանության նախադասությունների բաժանման ստորև առաջարկվելիք մոտեցմամբ:

Ուրարտական արձանագրություններից հայտնի են գազ բարձրանալու փաստն արձանագրող երկու հիմնական բանաձև: Դրանցից առաջինում, չնչին տարբերություններով, նշվում է հայրական տեղն արքայական (իմա՝ գահին) բարձրանալու մասին (^{LU}AD-ni (տրբ. ^{LU}ateini) esi LUGAL-tuḫini nahabi)¹⁷: Երկրորդ բանաձևն ունի առավել կայուն կառուցվածք՝ երկու արտահայտությունից՝ nahadi LUGAL-tuḫinina ^{GIS}GU.ZA-a terume¹⁸:

Մասնագիտական դրականության մեջ այս տողը դիտվում է որպես մեկ արտահայտություն՝ terume հաստատեց-ինձ (բազմեցրեց-ինձ) բայը վերագրելով հաջորդող մտքին: Մինչդեռ LUGAL-tuḫinina-a գրելաձևը եզակի տրական հոլովի -a ցուցիչով, հանդես է գալիս որպես հանգման անուղղակի խնդիր, ինքնին վկայելով մտքի ավարտը: Ըստ այդմ, ^{GIS}GU.ZA terume-ն հարկ է դիտել որպես առանձին միտք՝ գահին հաստատեց-ինձ

¹⁴ Ա.ք.ք. agū: Այն արտահայտում է նաև խուլյր կամ ապարոշ իմաստները: Թարգմանությունը պայմանավորող սկզբունքների մասին տես The Assyrian Dictionary (Chicago, vol. 1, 1964, pt. 1, A), agū: A.

¹⁵ Մասնագիտական դրականության մեջ առաջարկվել է tubarduni-ի խուլրիբերեն tubuṣ, lib-ից սերված լինելու հնարավորությունը: Վերջիններս ունեն ամուր, ամրացնել նշանակությունը (KYKH, c. 470, նշվ. դրականությամբ), որտեղից է, միգուցե, ծագում են tubarduni-ի ենթադրվող ամրակապ, փաթթոց և դրանցից ածանցվող խուլյր (փաթթոցաձև թագ), ապարոշ իմաստները:

¹⁶ Այս մասին մեզ հայտնեց պրոֆ. Ն. Հարությունյանը, ինչի համար և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

¹⁷ KYKH, 148, ԾԿ. 7; 149, ԾԿ. 5; 174A3, ԾԿ. 17-19; 247, ԾԿ. 2.

¹⁸ KYKH, 406, ԾԿ. 24-26; 407, ԾԿ. 19-20, ինչպես և քննարկվող տողերում:

թարգմանությունը¹⁹: Նման կառուցվածք հանդիպում է միայն Ռուսա Սարգուրորդու թողուղավայրի արձանագրությունում, որտեղ առկա է *terume^mUrzanase^{LU}AD-sinini^{GIS}GU.ZA MAH-ni eriliinie* միտքը հաստատեց-ինձ Ուրզանան հայրական բարձր գահին արքաների թարգմանությունը²⁰:

Ելնելով նշվածից, Զ-րգ տողն ընթերցում ենք հասա (բառացի բարձրացա) արքայություն, գահին հաստատեց-ինձ տարբերակով:

10) Արտահայտությունը քննարկվող տեքստից զատ հանդիպում է նաև Հաղիի և Չելեբի-բաղիի արձանագրություններում մասնագիտական գրականության մեջ տեղ գտած տարամետ մոտեցումներով²¹: Արտահայտությունը պարունակող ենթատեքստն ինքնին վկայում է, որ գործ ունենք արքայական իշխանության որևէ խորհրդանիշի հետ: Ըստ այդմ, միանգամայն ընդունելի է առաջին *gis* վանկանշանի գիտարկումը որպես գաղափարագիր²², քանզի LUGAL-tuḫi(ni) բառի իմաստը հայտնի է²³: *GIS* GU.ZA – GIS (LUGAL-tuḫini) հաջորդականությունը թույլ է տալիս հստակեցնել արտահայտության իմաստը մասնագիտական գրականության մեջ արդեն իսկ առաջարկված գայիսոն^(*) նշանակությունը²⁴: Նման մոտեցման օգտին կարող են վկայել նաև ուրարտական արքաների թագադրության արարողակարգի որոշ դրվագներ վերարտադրող «Լուվրի ադյունակի» տվյալները: Վերջինիս մեղ հետաքրքրող հատվածում, մասնավորապես, ասվում է. «...նալիի նրա աստծու առջև թագադրում են նրան տերունական խույրով և տալիս են կրեոլ արքայական գայիսոնը Ուրարտու (երկրի), իսկ նրա մարդիկ բացականչում են անունը նրա...»²⁵: Ըստ այդմ, ուրարտական GIS LUGAL-tuḫi(ni)-ն, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է

¹⁹ Արձանագրության մեջ տեղ չի գտել *GIS* GU.ZA-ի տրական հոլովի -a ցուցիչը, ինչը պայմանավորված է տողի սղությունով: ակնհայտորեն, տողավերջի սեպարատրերն արձանագրվել են առանց անհրաժեշտ միջնատարածքների:

²⁰ КУКН, 387, урарт. текст, стк. 10-11. Հմտ. М. S a l v i n i. I documenti.– In: P. E. P e s o r e l l a – M. S a l v i n i. Tra lo Zagros e l’Urmia – “Incunabula Graeca”, vol. 78, Roma 1984, p. 87-90; В. A n d r é - S a l v i n i, M. S a l v i n i. SMEA, XLIV/1, p. 14.

²¹ КУКН, 406, лиц. стор. 26 и прим. 23. Հմտ. Г. А. М е л и к и ш в и л и. Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), 276, лиц. стор. 26 и прим. 9; F. W. K ö n i g. Handbuch der chaldischen Inschriften (այսուհետև՝ HchI), Teil II – “Archiv für Orientforschung” (այսուհետև՝ AfO), Beiheft 8, Graz, 1957, 124:V; M. d e T s e r e t h e l i. Etudes Ourartéennes VI: L’ inscription de la stèle de Hagi.– “Revue d’Assyriologie”, LII^e volume, N^o 1, 1958, p. 30/1 (I. 26).

²² Այս գաղափարագիրն ունի լայն կիրառություն, արտահայտելով, ի լրումն հիմնական նշանակությունը ծառ, (փայտե) առարկա, նաև՝ գինք, (մետաղյա) առարկա իմաստը, այդ թվում՝ ուրարտական վիճագրության մեջ (КУКН, с. 416, GİŞ II): Հմտ. Այանիսի ծավալուն արձանագրության գեները և սրբազան առարկաներ թվարկող շարքը (TUKUL^{MEŠ} GIS^{MEŠ} Sİ^{MEŠ}): M. S a l v i n i. The Inscriptions of Ayanis (Rusahinili Eiduru=kai): Cuneiform and Hieroglyphic.– In: A. Ç i l i n g i r o g l u, M. S a l v i n i (eds.). Ayanis I. Ten Years’ Excavations at Rusahinili Eiduru-kai 1989-1998. Roma. 2001, p. 257 (Ay-susi IV, Ins. 3-4).

²³ КУКН, с. 420, 449.

²⁴ Г. А. М е л и к и ш в и л и. УКН, 276, лиц. стор. 26; F. W. K ö n i g. HchI, Bd. II, 124:V.

²⁵ W. M a y e r. MDOG, Heft 115, S. 102-103 (Z. 342).

վերը նշված աղբյուրի արքայական գայիսոն (²⁶PA LUGAL-ti = ḫatti šarruti) արաահայտությունը²⁶:

10-12) Այս տողերը ներկայացնում են վերը նշված շարքը եզրափակող ինքնատիպ մի արտահայտություն, որի թարգմանությունը կարող է նպաստել արքայական (երկրային) և աստվածային (երկնային) իշխանությունների «փոխհարաբերություններին» վերաբերող որոշ պատկերացումներ վեր հանելուն²⁷: Ուրարտական տեքստերի տարբեր հրատարակություններում այս տողերը, ցավոք, մնացել են չթարգմանված. պարզված է էին ueselaše և uesijauli բառերի իմաստները:

Խաղթի աստծու կողմից Ռուսային «տրված» արքայական խորհրդանշերը հավաքական առումով, ինչպես վերը նշվեց, խորհրդանշում են իշխանություն, երևույթ, որ լայնորեն ներկայացված է նաև հին առաջավորասիական սեպագիր այլ աղբյուրներում: Չմեկնաբանվող ueselase բառը, մեր կարծիքով, կարող է լինել այդ նույն իշխանությունը՝ արտահայտելով շնորհված խորհրդանշերի հավաքական իմաստը: Հարկ է նկատի ունենալ, որ տերմինն իր կառուցվածքով նման է ուրարտական սեպագրի վերացական դոյականներին (Հմտ. pišu-še – ուրախություն, alsui-se – մեծություն և այլն): Ըստ այդմ uesijauli (տրբ. uesijali) բայի համար կարելի է առաջարկել իշխել⁽¹⁾ թարգմանությունը, քանի որ երկու տերմիններն էլ ունեն նույն հիմքը: Մյուս կողմից, թվում է, դործ ունենք ուրարտական սեպագրում սակավ հանդիպող ներկա ժամանակի հետ, տվյալ դեպքում՝ նրա եզակի թվի երրորդ դեմքի՝ (նա) իշխում է²⁸: Ըստ այդմ, կարելի է առաջարկել հատվածի հետևյալ ընթերցումը. (10) ...պարգևեց-ինձ (11) իշխանությունն ճշմարիտ նա-որը (12) իշխում է ողջ տերությունը²⁹:

Ինչ վերաբերում է վերևում նշված uesigi-ին (alušme ueselaše uesigi), ապա այն, չնայած բայերի վերջավորություններին ոչ բնորոշ դրույթանը, ըստ երևույթի, կատարել է բայական ֆունկցիա: Այն բայ համարելու հիմնական կռվանը նույն արձանագրության 7-րդ տողի ubardugi-ն է, որին համապատասխանում է Հաղիի արձանագրության ubaradujali բայը. uesigi-ի կրկնակները Հաղիի, ինչպես և Չելեքի-բաղիի արձանագրություն-

²⁶ Տեղին է նշել, որ նույն աղբյուրի համաձայն, Մուծածիրից ձեռք բերված ռադմավարի թվում գտնվել են արձանագրության գայիսոններ (⁶¹PA KU.BABBAR, նույն տեղում, էջ 106-107, տող 382): ⁶¹PA գաղափարազիրը ուրարտական վիմագրության մեջ հանդիպում է մեկ անգամ՝ Հայկաբերդի (Չալուշթեփե) պեղումներից գտնված սեպագրի սալիկներից մեկում (A. M. D i n ç o l, B. D i n ç o l und M. S a l v i n i. Zwei urartaische Tontafeln aus Çavuştepe. – SMEA, XLIII/2, 2001, S. 198, Z. 5, Abb. 2-a): Հմտ. M. de T s e r e t h e l i. Etudes Ourartéennes VI, p. 35 (l. 34). Մյուս կողմից, խոսքը կարող է վերաբերել և գավազանի, ինչպիսին տեսնում ենք, օրինակ, Հին Բայազետի ուրարտական վիմագրանգում (D. H u l f. Das Felsgrab von Eski Dogubayazit – “Istanbuler Mitteilungen” (այսուհետև՝ IM), Bd. 18, 1968, S. 65, Abb. 1, Taf. 19):

²⁷ Առավել մանրամասն տե՛ս Ս. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը, Երեւան, 1990, էջ 33-64:

²⁸ Հմտ. GUD II UDU DINGIR aluše urulili uesijali՝ (մեկ) ցուլ, երկու ոչխար՝ աստծուն, որը հոգիներին է՝ իշխում⁽¹⁾ արտահայտությունը (KYKH, 38, Текст I, стр. 9, Текст II, стр. 14): Այստեղ տեսնում ենք ներկա ժամանակով տրված մի օրինակ, քանի որ uesijali բայը ցանկացած թարգմանության դեպքում անգամ ցույց է տալու հարատևություն. անհայտ աստծու գործառույթը էջը ենթադրում սահմանափակումներ:

²⁹ Ողջ տերությունը (բառացի՝ բոլոր երկրներին) թարգմանություն մասին տե՛ս ստորև:

ներում վերականգնվել են հետազոտողների կողմից: Ըստ այդմ, uesēlase uesigi բառակապակցությունը կարող է արտահայտել, միգուցե, իշխանութ-յամբ օժտել³⁰ (բառացի՝ իշխեցնել³¹, իշխել ապ³²) իմաստը, նամանականդ՝ նույնն են երկու տերմինների բառարմատները: Ելնելով ասվածից՝ 4-6-րդ տողերի համար առաջարկում ենք (4) Խալդյան գորությամբ տերունական, (5) որը-ինձ երկրային³⁰ ճշմարիտ (6) իշխանությամբ³¹ օժտեց³² ընթերցումը:

12) Հարկ ենք համարում քիչ հանգամանորեն կանդ առնել aluka uesiiauli PAP KUR.KUR^{MES} արտահայտության վրա, որը հանդես է գալիս Հադիի և Ջելեբի-բադիի արձանագրություններում aluka uesiiauli burgalani^{KUR} surili և aluka uesijauli burgalani KUR.KUR^{MES} տարբերակներով³¹:

Բավական վիճահարույց է արձանագրության հրատարակչի կողմից pap սեպանշանի միանշանակ մատուցումը KUR՝ թշնամի, թշնամական (երկիր) իմաստով առանց նշելու նույն սեպախմբի արտահայտած մեկ այլ՝ ամբողջ(ը), ընդհանուր(ը), բոլոր(ը) (միասին) նշանակությունների մասին³². Նման բովանդակությամբ այն երիցս հանդիպում է ուրարտական տեքստերում³³: Ընդ որում, ենթադրվող թշնամական (երկիր)-ը նա համադրում է burgala(ni) տերմինի հետ՝ վերջինիս վերագրելով նույն իմաստները³¹:

Ինչ իսոթ, իրավացի է Մ. Սալվինին՝ առաջարկելով այս համադրությունը, սակայն՝ ոչ նշված իմաստներով: Դիմենք փաստերին:

Դիտություն մեզ^{KUR} surili-ն և KUR.KUR^{MES}-ը վաղուց են նույնացվել: Այս երկու հասկացությունները կարող են փոխարինել միմյանց. դրանք նույնն են բովանդակությամբ, բայց ոչ իմաստներով: Անընդունելի է արձանագրության հրատարակչի մոտեցումը^{K11P} surili-ին վերագրել պարզապես երկիր (երկրներ) իմաստը, և դա այն դեպքում, երբ այս իմաստն արտահայտում է^(KUR) ebani-ին (համտ. ^(KUR)ebanili՝ երկրներ): Մի քայլ, որն անհրաժեշտ է burgalani-ին վերագրվող թշնամի, թշնամական իմաստն ամրապնդելու համար: Բիայնիլիի արքաներին այնքան հաբազատ^{K11P} surili-ն (մի կողմ թողնենք այս տերմինի հետ կապված քննարկումները) երբևէ չէր կարող համարվել թշնամի կամ անգամ հանդես գալ պարզապես երկիր իմաստով: Այս տերմինն իր ամբողջությամբ հարկ է դիտել ուրարտական տերություն, նրա կառույցների ու բովանդակության բաղկացուցիչ մաս³⁵:

³⁰ Այսպես ենք թարգմանում suini esini արտահայտությունը, որը բառացի նշանակում է ամբողջ տեղը (ամենուրեք, ողջ տարածքով և այլն): Տե՛ս КУКН, 79, стк. 6-7:

³¹ КУКН, 406, лиц. стор., стк. 29-30; КУКН, 407, лиц. стор., стк. 22-23.

³² R. B o r g e r. Assyrisch-babylonische Zeichenliste. – "Alter Orient und Altes Testament", Bd. 33, Neukirchen-Vluyn, 1978, S. 68-69 (№ 60).

³³ ԽձԽձ, ր. 421.

³⁴ SMEA, XLIV/1, p. 128.

³⁵ Առավել հավանական են տերմինի հետ կապված ի. Դյակոնովի մոտեցումները, որոնց անդրադառնալը դուրս է մեր նպատակներից (մանրամասները տե՛ս И. М. Дьяконов. Некоторые данные о социальном устройстве Урарту. – В кн.: "Проблемы социально-экономической истории древнего мира". М. – Л., 1963, с. 55 сл.; он же. Урартские письма и документы, М.-Л., 1963, с. 82; он же: Жертвоприношения в Тейшебаини (Из общественной истории Урарту). – "Кавказско-ближневосточный сборник" (այսուհետև՝ КВС), VIII, 1988, с. 59-60, 66, прим. 33); I. M. D i a k o n o f f, I. N. M e d v e d s k a y a. The Kingdom of Urartu. – "Bibliotheca Orientalis",

Բացի այդ, ուրարտական տեքստերից ակնհայտ է դառնում, որ և՛ ^{KUR}šurili-ն, և՛ KUR.KUR^{MEŠ}-ը դիտվել են մեկ ամբողջություն. այդ է պատճառը, որ burgala(ni)-ն կիրառվել է եզակի թվով³⁷: Ըստ այդմ, զգուշորեն պետք է մոտենալ KUR.KUR^{MEŠ} գաղափարագրերի կոմբինացիայի նշանակությանը, որն ավելին է, քան պարզապես Երկրներ(ը), մասնավորապես՝ արքայական տիրոջ սաշարերում: Վերջինիս առավել նպատակահարմար թարգմանությունը, ըստ ամենայնի, տերությունն է³⁸: Ինչ վերաբերում է burgala(ni)-ին, ապա այն, կարծում ենք, հանգիսանում է PAP գաղափարագրի հնչյունագիր համապատասխանությունը:

13-15ա) Նշված տողերն արտահայտում են ուրարտական տարբեր տեքստերում հաճախ հանդիպող բանաձևերից մեկը, նույնությամբ, սակայն, չկրկնելով այն: Զուգահեռները հայտնի են միայն Հադիի և Չելբերի-բադիի արձանագրություններից: Հիմնական քննարկումներն այստեղ կապված են e a ipsuse suini urini արտահայտության հետ: Հետաքրքիր օրինակներում է նկատվում ուրարտական տեքստերի նմանաբնույթ օրինակներում: Դրանց դիտարկումը ցույց է տալիս, որ գոյություն ունի երկու բանաձև՝ բարեմաղթությունների շարք, որոնցից մեկը, թվում է, աստվածների կողմից տրվել է մարդ-անհատի³⁸, մյուսը՝ արքա-առաջնորդի³⁹:

Մեր կողմից քննարկվող արտահայտությունը պատկանում է երկրորդ խմբին, այսպիսով, բնորոշելով արքային որպես երկրի ճակատադրի, հաջողության ու հաղթանակի կերտողի և կրողի՝ առաջնորդի: Մենք հնարավոր ենք համարում^(LU) ipsuse տերմինին վերադրել առաջնորդ⁽¹⁾, առաջնորդություն⁽¹⁾ իմաստը, որն ինչ-որ տեղ համադրելի է ուրարտական տեքստերում արքային տրվող^(LU) sie^(LU) UKU^{MEŠ}, ժողովրդի հովիվ արտահայտությանը⁴⁰: Ինչ վերաբերում է uri(ni) տերմինին, ապա, թվում է, որ այն արտահայտել է մի ընդհանրություն՝ համընդգրկուն սեփականություն, «աշխարհ» (կապվածք), արքայի որպես գերագույն սեփականատիրոջ, առաջնորդություն

Jaargang XLIV, N 1-2/3-4, 1987, p. 393: *Štu nsk G. Wilhelm*. Sura'i in Kargamis und das urartäische Gentiliz šurele.— SMEA, Fasc. XXXI, 1993, S. 135-141: *հնդիրն առավել հիմնավորում կունենա, եթե հաստատվի հիբրուգլիֆ լուվիերեն տեքստերից մեկում վկայված surawanas կոչվող լեզվի և ^{KUR}šurili-ի կապը:*

³⁶ Հմտ. burgalali LUGAL-lili (տարբ. LUGAL^{MEŠ}) ^{KUR}etiuhini(e)li-ն, ուր burgalali-ն համաձայնեցված է LUGAL-lili (ereli-li) արքաներ բառի հետ՝ հանդես գալով հոգնակիի -li ցուցիչով այսինքն՝ բոլոր արքաները էթիունյան (Երկր(ներ)ի). տե՛ս КУКН, 31, лив. стор., стк. 14-15, 30-31, обор. стор., стк. 4:

³⁷ И. М. Дьяконов. КБС, VIII, с. 60.

³⁸ Հմտ. bidini ... manini ulguše alsuše eia(-)ardiše arni usmaše pisuše uaniše ... UD^{ME.MEŠ} SIG^{MEŠ} pisusininili siprugini (թարգմանությունը տես КУКН, 277, стк. 1-8, և այլուր, ուր կարելի է տեսնել նաև išpuiše, aruše, ekuše բառերը՝ երջանկություն և մոտ իմաստներով):

³⁹ Հմտ. ušhanume ... hututuhi gunuše eue^(LU) ipsuse (թարգմանությունը տե՛ս КУКН, 406, стк. 31 сл.):

⁴⁰ Նման մոտեցման վկայությունն է նաև gunuše e'a ipšuše՝ (հաղթական) մարտ և առաջնորդություն՝ շարքը. այն համադրելի է ուրարտական արքաներից Սարգուրի I-ի ասուրերեն արձանագրության ^{LU}SIPA tabrati La adiru tuqunte՝ հիացմունքի արժանի հովիվ, որը չի վախենում մարտից արտահայտությանը:

յամբ⁴¹: Այս հարցի շուրջ շատ է են տարբերվում Մ. Սալվինիի մոտեցումները՝ այլ հիմքի վրա⁴²:

15բ-17) Կոթողի մեծ հետաքրքրություն ներկայացնող հատվածներից մեկն է, որն ունի պարզաբանման կարիք:

17-րդ տողում արձանագրված ⁽¹⁵⁾ aueiteni տերմինը հանդիպում է պալատամունքային բովանդակություն ունեցող տեքստերում՝ ոչ հստակ մեկնաբանություն⁴³: Նկատի ունենալով տերմինի հետ երբեմն կիրառվող LU որոշիչն ու տեքստերի բնույթը, վերջինիս տրվել են քուրմ⁽⁷⁾, տաճարի սսլասավոր⁽⁷⁾ մոտավոր հմաստները: Եթե ընդունենք այս մոտեցումը, ապա կարող ենք խոսել ուրարտական տեքստերում ոչ հաճախ հանդիպող փաստի՝ արքայի կատարած նվիրատվության մասին: Խոսքը, կարծում ենք, վերաբերում է հողատարածքը կամ կալվածքը «խալդեյան հրամանով» քրմությանը նվիրելու մասին (բառացի՝ բերելու: siubi - բերեցի⁴⁴): Ըստ այդմ, կարելի է հատվածին տալ հետևյալ թարգմանությունը. (15) ... Խալդեյան (16) հրամանով (այս) ողջ կալվածքը⁽⁷⁾ (17) քրմությանը⁽⁷⁾ տվեցի⁴⁵:

18-20) Տողերը ենթակա են հստակ մեկնաբանության: Ինչ վերաբերում է Քիլբանի լեռանը, ապա Մ. Սալվինին այն նույնացնում է Վարազա լեռան հետ (Թուրք. էր(ե)ք Դադ, բարձրությունը՝ 3250մ)⁴⁶: Վան քաղաքից հարավ-արևելք⁴⁶, իր մոտեցումները ներկայացնելով բավական հանդամանորեն⁴⁷:

21-22) Նախորդ մտքի շարունակությունը վերականգնվում է Հադիի և Չեյբեի-բադիի նմանատիպ տեքստերի հիման վրա⁴⁸: Այս առումով հարկ է նշել, որ լիովին կորսված 21-րդ տողի համար Մ. Սալվինիի առաջարկած վերականգնումը միանգամայն ընդունելի է. բավական ծավալուն թվացող տեքստը, այնուամենայնիվ, տեղավորվում է մեկ տողում: Տերմինների հստակ գրեթե բացակայում, սակայն, անհնար է խոսել: Հնարավոր տարբերությունները, ամեն գեպքում, կունենան սոսկ գրաֆիկ նշանակություն՝ չփոփոխելով տեքստի հմաստը⁴⁹:

23-24ա) sú-ki (^dHaldiše)՝ ինչպես (Խալդի աստվածը) - նմանակիղը արտահայտությունների առկա օրինակները մատնանշում են երկու հիմնական բանաձև:

⁴¹ Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту. Древневосточные материалы по истории народов Закавказья 1. Тбилиси, 1954, с. 351-352.

⁴² Արձանագրության հրատարակիչը տերմինին վերագրում է հող, արածություն հմաստները՝ հիմնվելով unni = GAN ենթադրյալ համապատասխանության վրա (SMEA, XLIV/1, pp. 129-130):

⁴³ КУКН, 425, стк. 2; M. S a l v i n i. The Inscriptions of Ayanis, p. 257 (Ay-susi III, ln. 11).

⁴⁴ КУКН, с. 464-465.

⁴⁵ Հմմտ. M. S a l v i n i. SMEA, XLIV/1, p. 123, 130.

⁴⁶ Турция (карта 1:2 000 000), М., 1966.

⁴⁷ SMEA, XLIV/1, pp. 130-133.

⁴⁸ КУКН, 406, стк. 39-42; 407, стк. 29-31.

⁴⁹ Հմմտ. հատվածում առկա տերմինների գրեթե բացակայում վերը նշված գույք արձանագրություններում՝ ab-si-e-i և ab-si-i, ^{GIS}SE և ^{SAM}SE, ^{GIS}GESTIN և ul-di և այլն:

Տեքստերի գերակշռող մասում այն ունի suki ⁵⁰ Haldise iziduni (տրբ. ubarduduni) iese... Հենց որ Խալդի (աստվածը) Հրահանգեց, ես... (Հետևում է գործողությունը)⁵⁰, իսկ մնացածում՝ suki ⁵¹ Haldise iziduni aru-me iese... Հենց որ Խալդի (աստվածը) Հրահանգ տվեց-ինձ, ես... կառուցվածքը⁵¹:

Կոթողի պակասող հատվածը հնարավորություն է ընձեռում նշված կառուցվածքների հիման վրա առաջարկելու վերականգնումների մի քանի տարբերակ: Նախ հարկ է նշել, որ պակասող հատվածում Խալդի դիցանունից բացի aru-me տվեց-ինձ արտահայտության վերականգնումը տեղի սղոթյան պատճառով հնարավոր չի թվում: Դրա փոխարեն կարելի է ենթադրել šu-ki¹ [^dHal-di-se SUM-me] տարբերակը՝ ar(u) տալ բայի գաղափարագիր համարժեքով⁵², առաջարկել ուրարտական տարբեր տեքստերում հանդիպող ^dHaldis-me-ն⁵³ կամ էլ, պարզապես, ընդունել su-ki [(^dHal-di-še)]-ն, ինչպես տրված է տեքստի առաջին հրատարակության մեջ⁵⁴: Այս վերջին դեպքում, սակայն, հարկ կլինի ավելացնել լրացուցիչ -i- վանկը (այսինքն՝ ^dHal-di-i-se) տողի համաչափությունը պահպանելու միտումով:

Քանի որ Հաղիի և Չելեբի-բաղիի արձանագրություններում, այնուամենայնիվ, aru-me-ն առկա է (իսկ Գյովելեքը մեծապես հիշեցնում է այս տեքստերը), ապա գերադասելին, կարծում ենք, ^dHaldis-me՝ Խալդի-ինձ վերականգնումն է (ինչպես Խալդի-ինձ Հրահանգեց)⁵⁵: Այս դեպքում, 24-րդ տողի izi(d)uni-ն⁵⁶ հարկ է ընդունել որպես բայ նույնությամբ կրկնվող iziduni գոյականի փոխարեն (համտ. վերը նշված օրինակները):

24ր-26ա) Այս առղերը պարունակում են ուրարտական վիճագրության մեջ հաճախ հանդիպող կաղապարային բանաձևերից մեկը՝ արքայի կատարած մեծագործությունների վաստի արձանագրումը: Բավական լավ ներկայացված լինելով հանդերձ, սույն արձանագրության առաջին հրատարակության մեջ տեղ են գտել ոչ քիչ թվով անճշտություններ:

Նախ հարկ է նշել, որ 25-րդ տողի պակասող մասը շատ ավելի փոքր է, քան առաջարկված arniu[sinili zadubi] տեքստային վերականգնումը, սակայն, դրա փոխարեն, միանգամայն բավարար է arniu[sinili]՝ մեծագործություններ բառի համար, որից պահպանվել են առաջին երեք վանկերը: Համոզված ենք, որ այս տերմինով և եզրափակվել է տողը, ինչի օգտին կարող է վկայել նաև այն փաստը, որ նշված տողում վանկերն արձանագրվել

⁵⁰ КУКН, 427а, стк. 3; 419, стк. 5-6; 421, стк. 9-10.

⁵¹ КУКН, 406, лиц. стор., стк. 43-44; 407, лиц. стор., стк. 31-32, ինչպես նաև КУКН, 271, стк. 4-5.

⁵² КУКН, с. 422, 436.

⁵³ КУКН, 406, с. 483.

⁵⁴ SMEA, XLIV/1, p. 117, lns. 23-24.

⁵⁵ SUM-me տարբերակն առաջարկելուց ձեռնպահ ենք մնում այն պատճառով, որ նման գրելաձևով SUM (աքք. nadānu՝ տալ) գաղափարագիրն ուրարտական տեքստերում չի հանդիպում: Հայտնի օրինակներն են՝ SUM-na/i-ն և SUM-nu/i-ni-ն:

⁵⁶ Iziduni-ի փոխարեն առկա iziuni գրելաձևը չի հակասում ուրարտական սեպագրի քերականական կանոններին: Սակայն հնարավոր է, որ տվյալ պարագայում գործ ունենց գրագրի սխալի հետ: Սրա վրա մեր ուշադրությունը հրավիրեց Ն. Հարությունյանը:

են միմյանցից նկատելի հեռավորության վրա⁵⁷: Միակ, քիչ հավանական տարբերակ կարող է լինել նշված բառի վերջնամասում լրացուցիչ -e- վանկի հավելումը՝ դրաֆիկ նշանակությունը⁵⁸:

Բացի այդ, 24-րդ տողի բացակայող հատվածի համար Մ. Սալվինիի առաջարկած (ini) PA₅ agubi վերականգնումը չի արդարացնում իրեն: Նախ, ուրարտական ողջ վիմագրության մեջ չունենք որևէ դեպք, երբ տեքստում թվարկվող միավորների փոխարեն, որոնք «չեն եղել», որպես կատարված աշխատանք կամ արդյունք նշվի դրանցից միայն մեկը: Սկզբնապես արձանագրված շարքը, սովորաբար, կրկնվում է ամբողջությամբ⁵⁹: Տվյալ դեպքում ակնկալելի կլիներ, ելնելով տողի երկարությունից, որևէ հանրագումար, ենթադրենք՝ inili-ն՝ այս, սրանք նշանակությունը: Մյուս կողմից, ինչպես վերը նշվեց, 25-րդ տողում գործողությունն ցույց տվող բառ իրականում գոյություն չունի: Իսկ քանի որ 26-րդ տողի սկզբնամասում նշված istini-ին հաջորդում է նոր նախադասություն, ապա մնում է մեկ հնարավորություն՝ ստորոգյալի վերականգնում քննարկվող 24-րդ տողի սահմաններում՝ հանգամանք, որը նույնպես կբացառի սկզբնական կառուցումը: 24-րդ տողի iese՝ ես ենթակային, հետևաբար, անմիջապես հաջորդել է ստորոգյալը, ամենայն հավանականությամբ նույն zad(u)-ն՝ եզակի թվի առաջին դեմքի bi ցուցիչով, ինչպես նաև լրացուցիչ -a- կամ առավել հավանական -ü- վանկի հավելումով za-du-(ü)-bi:

26-րդ 27) 26-րդ տողում, այնուհետ, պահպանվել է ուրարտական արձանագրություններին բնորոշ «արքան ասում է» բանաձևը, որին, սովորաբար, հաջորդում է որևէ գործողության նկարագրություն: Մ. Սալվինին, ելնելով հաջորդ տողում ընթերցվող ^{K11R} uraidi՝ դեպի-Ուրա (երկիր) արտահայտությունից⁶⁰, նշված տողի բացակայող հատվածում ենթադրում է շարժում արտահայտող որևէ բառ⁶¹: Տվյալ դեպքում, հիմք ընդունելով պահպանված տողի վերջնամասում առկա a վանկը, որպես այդպիսին նա տեսնում է asadi՝ առաջացա, գնացի, հետևեցի, թերևս նաև վերադարձա բայը, այնուամենայնիվ, ձեռնպահ մնալով արձանագրության տառադարձ-

⁵⁷ Տե՛ս արձանագրության ինքնաձեռագիրը և SMEA, XLIV/1, էջ 119-ում արված լուսանկարը (fig. 3):

⁵⁸ Հմմտ. ar-ni-ü-ši-ni-e-li գրեթե KYKH, 173, II (CTK. 24, 50) և 173, III (CTK. 45) տեքստերում:

⁵⁹ Ուրարտական տեքստերում դերակառուցում է «ոչինչ չկար այստեղ - ես ստեղծեցի» բանաձևը, թեև առկա են օրինակներ, ուր նշված բանաձևին նախորդում են ստեղծված միավորների հիշատակությունն ու դրանց կրկնակի մատուցումը: Հմմտ., օրինակ, Շուշանցի արձանագրությունը, ուր ասվում է. «նալդյան գործությամբ Մենուան, Իչպուհնորդին, դդյակ⁶² փառահեղ կառուցեց, քաղաք կառուցեց, ոչինչ այստեղ կառուցված չէր, Մենուան, Իչպուհնորդին, կառուցեց և դդյակ⁶³, և քաղաք» (KYKH, 98, CTK. 1-3):

⁶⁰ Մ. Սալվինիի մոտ՝ լեռ (SMEA, XLIV/1, p. 131-133): Նման մոտեցումը արդարացում է չի գտնում Չելերի-բաղիի արձանագրության տվյալներում: Դրանում հիշատակվում են Ուրա երկրի չորս լեռներ (ŠADU Amunini ŠADU Buduani ŠADU Nagiliani ŠADU Salatarani KUR Ura-e): Ինչպես հայտնի է, ուրարտական սեպագրում եզակի թվի սեռական հոլովի ցուցիչ կարող է հանդես գալ նաև e-ն (Հմմտ. LU^{MES} gunušini ... ^{NUR} Hate-e՝ ռազմիկները ... խաթե (երկրի) ևն): Իսկ դա բացառում է Ուրա տեղանվան տակ լեռ տեսնելու հնարավորությունը:

⁶¹ M. Salvini. SMEA, XLIV/1, p. 131.

ման և թարգմանություն մեջ այն արտահայտելուց⁶²: Իհարկե, նման վերականգնումը քերականական տեսանկյունից չի հանգիպում որևէ խոչընդոտի, սակայն, թվում է քիչ հավանական. գծվար է ասել, որքանով արդարացված կլինի արքայի կողմից Ուրա երկիր մեկնելու (կամ, ավելի ճիշտ, արշավելու⁶³) ինչ-որ եղակի և ենթատեքստի հետ ամենևին չկապվող գործողություն վերականգնումը այս արձանագրությունում: Մեր կարծիքով, Խուսայի հայտնած գործողությունը կարող է առնչվել ոչ միայն հաջորդ, այլև մյուս 28-րդ տողում նշվող urubi inu sue լցրեցի⁶⁴ այս ծովը արտահայտություն հետ:

Արհեստական ջրամբար ստեղծելու համար, հասկանալի է, անհրաժեշտ են ջրային ռեսուրսներ: Ըստ այդմ, հակված ենք պահպանված տողավերջում հստակ ընթերցվող վերոհիշյալ a վանկը դիտել իր գաղափարագիր նշանակությունում՝ A (աքք. mū ջուր), հավելելով նաև հոգնակիի ցուցիչ, այսինքն՝ A⁶⁵ ջրեր: Այս դեպքում պակասող հատվածում հնարավոր ենք գտնում վերականգնել նաև sehiri բառը, այսպիսով կենդանի ջրեր: Նման մոտեցումը վաստարկելի է միջագետքյան սեպագիր հուշարձաններում պահպանված համանման օրինակներով, որոնցում տեսնում ենք A.MEŠ TI.LA գաղափարագրերի նույնիմաստ կոմբինացիան⁶¹: Վերը նշված բառը, մյուս կողմից, կարելի է, գուցե և հարկ է, ընկալել կենարար նշանակությունում: Նման հնարավորություն է մատնանշում համախմբի մեկ այլ կիրառում ասորեստանյան արքա Աշշուրբանապալի տարեգրություն հատվածներից մեկում: Նրանում, մասնավորապես, ասվում է. «...քաղաքներում, ամհնուրեք, ուր կային ալբյուրներ կամ ջրհորներ, հաստատեցի պահպանումներ դրանց վրա և զրկեցի նրանց (բնակիչներին – Ե. Գ.) ջրից, որը կյանք է պարգևում» (A.MES TI.LA)⁶⁵:

Մի շարք հարցականներ է պարունակում 27-րդ տողի վերջահատվածի վերականգնությունը: Այստեղ հստակ ընթերցվում են LU, a, b/pu և մասնակիորեն՝ ul սեպանշանները: Մ. Աալվինին ընթերցում է ^{LU}a-bu-u[1-x-x], տրված մեկնաբանություններում չբացատրելով ^{LU}A bu-u[1-x-x] տարբերակը: Ամեն դեպքում, նա տերմինին վերագրում է պաշտոնատար անձի գործառույթներ⁶⁶: Ընդհանուր ենթատեքստից ելնելով, առավել հավանական է թվում ^{LU}A (աքք. ap[lu՝ որդի) ընթերցումը, եթե հիմք ընդունենք Քահանայի լճի (թուրք. Գեչիլ-գյուլ)՝ ինչ-որ տեղ համանման տեքստի ^{LU}DUMU (աքք. maru) նույնիմաստ արտահայտությունը⁶⁷: Այս դեպքում, հաջորդող

⁶² Նույն տեղում, էջ 117 (տող 26), 123: Նման դիրքորոշումը թերևս պայմանավորված է այն սլատառով, որ արձանագրության առաջին հրատարակչին նկատելի է դարձել որոշակի անհամաչափություն՝ սլակասող հատվածի և ենթադրված բայի զբաղեցնելիք տարածության միջև:

⁶³ Մեզ հայտնի բոլոր երեք գեպերում adadi բայը հանդես է գալիս ռազմարշավանքներ նկարագրող ենթատեքստերում, ինչ-որ տեղ փոխարինելով ušladi՝ արշավեցի բային: Sb'u KYKH, 174C, ԵՏԿ. 4 ՇԱ.; 409, ԵՏԿ. 2 ՇԱ.; 411, ԵՏԿ. 22 ՇԱ.

⁶⁴ D. A. F o x v o g. Royal Inscriptions at Berkeley. – RA, LXXII, № 1, 1978, p. 45 (Col. I, In. 8); G. S m i t h. History of Assurbanipal. London, 1871, p. 74.

⁶⁵ D. D. L u c k e n b i l l. Ancient Records of Assyria and Babylonia. Vol. 2, Chicago, 1927 (№ 827).

⁶⁶ SMEA, XLIV/1, p. 133.

⁶⁷ KYKH, 391, ԵՏԿ. 11, 15-16.

bu նշանը կարող է լինել առաջինի հնչյունական լրացում՝ ^{LU}A-bu⁶⁸: Մասնագիտական գրականության մեջ Քազանայի լճի վերոհիշյալ ^{LU}DUMU⁶⁹ արասալայան թղթի վրա գրված է Տուսպա (քաղաքի) բնակիչ, տուսպայեցի իմաստը (^{LU}DUMU-se⁶⁹ Tuspainise, բառացի՝ որդին Տուսպա քաղաքի)⁶⁹: Ըստ այդմ, քննարկվող ^{LU}A-bu տերմինը կարելի է առնչել Ուրա երկրի հետ ենթադրելով ուրայեցի, Ուրա երկրի բնակիչ կամ նմանիմաստ թարգմանություն: Տողավերջում, այսպիսով, կմնա միայն վերականգնել նախադասության ստորոգյալը, որը, ելնելով մասամբ պահպանված ul վանկից և ընդհանուր ենթատեքստից, կարելի է համարել ulh(u)-ն՝ եզակի թվի առաջին դեմքի անցյալ կատարյալ ժամանակով (^{ME}Rusaše ali A⁶⁹ ulhubi Ռուսան ասում է. ջրերը ուղղեցի⁷⁰):

28-29) ur(u)-bi – այս անցողիկ բայը ուրարտական վիճակագրության մեջ նման գրելաձևով հանգես է գալիս առաջին անգամ, որոշակի հիշեցնելով Քազանայի լճի և Քարաթաշի արձանագրությունների համապատասխանաբար ú-ru-lu-ni և ú-ru-li-e բայաձևերը: Այս բառին, ենթատեքստից ելնելով, հավանական ենք գտնում վերագրել լցնել (ջրով) և գրանից ածանցվող ողողել (ոռոգել) իմաստները⁷¹, եզակի թվի առաջին դեմքի անցյալ կատարյալ ժամանակի համար ունենալով լցրեցի, իսկ ողջ արտաստությունը համար՝ լցրեցի այս ծովը, որ, իրոք⁷², չոր էր թարգմանությունը:

29) [sü]-li. Մ. Սալվինին, չգիտես ինչու, վերականգնում է նշված ենթատեքստում երբևէ չհանգիպող ali բառը. այստեղ հարկ է, որ լինի այլ օրինակներից հայտնի süli-ն՝ անմշակ, ամայի, չոր, ջրաղուրկ մոտավոր թարգմանությամբ⁷², հոմանիշը նմանիմաստ quldini, sirabae, թերևս նաև salzi և panithie բառերի⁷³:

30) Արձանագրության հրատարակիչն այս երկու վանկերը գիտում է հնչյունգիր՝ ú-se, գրա գաղափարագիր U.SE / ^{SAVI}SE ընթերցումը համարելով քիչ հավանական⁷⁴: Այս մոտեցումը, սակայն, չի արդարացնում իրեն: Հարկ է նշել, որ որպես հիմք ընդունված ú-ú-se գրելաձևը հանդես է գալիս երկու այլ արձանագրությունների միանգամայն այլ բնույթի ենթա-

⁶⁸ LU A-bu տարբերակը կարելի է համարել ուրարտական սեպագրերի ^{LU}halbi-ի հետ, որն արդեն իսկ մասնագիտական գրականության մեջ նույնացվել է ^{LU}DUMU-ին (КУКН, с. 414, 445): Արդյո՞ք վրիպակի արդյունք է իրականում ոչ այնքան սկզբունքային bu - bi տարբերությունը, գծվար է ասել:

⁶⁹ Г. А. М е л и к и ш в и л и. УКН, 268, с. 332; КУКН, 391, с. 300.

⁷⁰ Մասնագիտական գրականության մեջ այս տերմինին արդեն իսկ վերագրվել է նման իմաստ (М. Л. Х а ч и к я н. Хурритский и урартский языки, с. 49, 100, 110, 114):

⁷¹ Հմմտ. М. S a l v i n i. Le iscrizioni di Sarduri II a Karataş.– “Orientalia” NS, vol. 62, fasc. 2, 1993, p. 78, նույնի՝ SMEA, XLIV/1, pp. 133-134; И. М. Д ъ я к о н о в. КБС, VIII, с. 64, прим. 12; КУКН, с. 473:

⁷² Ինդերո առարկա ենթատեքստը չնչին տարբերությամբ կարելի է տեսնել Քազանայի լճի արձանագրությունում: Հմմտ. ... imi suini esi guni šuli manuše... (Գյովելեք, ԴԿ II, տող 28-29) և ... inusi suini esi guni quldini šuli manu... (Քազանայի լիճ, տող 13-15):

⁷³ КУКН, с. 457-465.

⁷⁴ SMEA, XLIV/1, p. 134.

տեքստում⁷⁵, իսկ կարմիրը ուրարտական հայտնի աղյուսակում ենթադրված *u-se* ընթերցումը չի կարող համարվել հավաստի⁷⁶:

30-32ա) Հատվածը սերտորեն առնչվում է ուրարտական շինարարական բնույթի տեքստերի կաղապարային այն բանաձևերին, որոնցում արձանագրվում է հողի ամայի լինելու, ինչպես նաև մշակագաղտերի, այգիների և կամ ջրանցքների բացակայության փաստը: Սրանում հստակ զանազանվում են չորս մտքեր, որոնցից մեկնաբանման է կարոտ հրատարակչի կողմից ես չթարգմանված երկրորդ միտքը: Նախ հարկ է նշել, որ 30-րդ տողի *pu-la-¹u¹-[e]* գրելաձևը պարտադրում է վերանայել Քահանայի լճի արձանագրության համանման հատվածի *[p]i-la-u-e-⁷⁷*: Գյովելեքի արձանագրության նշված տողում հստակ ընթերցվում է *b/ru* նշանը, ի տարբերություն Քահանայի լճի կոթողի 3-րդ տողում եզակի հորիզոնական «կարճ» սեպով պահպանված ենթադրյալ *pu* նշանի: Ինչ խոսք, գերադասելի է *bu* ընթերցումը, որը ևս վերջանում է մեկ «կարճ» հորիզոնական սեպով: Ըստ այդմ, իրավացի է *U. Սալվինին*, հարկ համարելով վերանայել մասնագիտական դրականության մեջ վերջինիս վերագրված ջրանցք(ներին) թարգմանությունը: Ի դեպ, այն իր հերթին հիմք էր ծառայել հաջորդող *isinaue* բառին վերագրելու առու(ներին) իմաստը⁷⁸: Նման մոտեցման օգտին են խոսում նաև այլ փաստեր: Եթե ընդունենք կարծեցյալ *pilauē* (կամ նույնիսկ *pulauē*) – ջրանցք(ներին) թարգմանությունը, ապա ստիպված ենք լինելու ընդունել նաև, որ քննարկվող ենթատեքստում նույն ջրանցքների բացակայությունը նշող միտքը կրկնվել է երկու անգամ տերմինն արձանագրելով մեկ վանկադիր՝ (*ui*) *pulauē ... istini manu* (տող 30-32ա), մեկ գաղափարագիր՝ *ui PA₅ agauri* տարբերակներով (տող 32բ): Նման «բացառություն» ուրարտական վիմագրության մեջ հայտնի չէ: Այս պարագայում հարկ կլինի պատասխանել մեկ հարցի՝ որո՞նք են այս և հաջորդող երկու բառերի հնարավոր իմաստները: Նախ հարկ է նշել, որ տվյալ դեպքում, անկասկած, գործ ունենք գոյականների հետ, այնպիսիք, որոնք «չեն եղել» (*ui ... pulauē isinaue ari(-)butauē⁽⁷⁹⁾ istini manu ui ...*): Այս միտքը, ինչպես վերը նշվեց, հիշեցնում է ուրարտական այլ տեքստերի կաղապարային որոշ բանաձևեր: Ենթադրում ենք, որ նշված շարքը, որը, ի դեպ, սկսվում է ^{SAM}SE (գարու) արտ տերմինով, առնչվում է վերն ակնարկված տեքստերի համանման շարքին: Դիտարկենք դրանցից մի քանիսը.

⁷⁵ КУКН, 53, стк. 22-23; 174В1, стк. 26.

⁷⁶ КУКН, 520, обор. стор., стк. 6 и прим. 43 (с литературой).

⁷⁷ И. М. Дьяков. Заметки по урартской эпиграфике. — "Эпиграфика Востока", № IV, 1951, с. 112-113.

⁷⁸ И. М. Дьяков. Урартские письма и документы. М.-Л., 1963, с. 89.

⁷⁹ Գյովելեքի կոթողի վերակազմության համաձայն ԴԼ II-ի 31-րդ պահպանված տողն ամենաներկարն է և պակասող հատվածում կարելի է ենթադրել, վնասված սեպանշանը վերականգնելուց հետո, ոչ ավել քան ևս մեկ սեպանշան: Արձանագրությունը հրատարակած *U. Սալվինին* գտնում է, որ պահպանվել են երկու հորիզոնական «կարճ» սեպեր. ըստ այդմ, գրանք վերագրելով *ia?* կամ *si?* նշաններին: Կարծես, նշմարվում են նաև մեկ ուղղահայաց սեպի հետքեր, ինչը թույլ է տալիս ենթադրել այլ հնարավորություններ *u, a, e, և այլն* (SMEA, XLIV/1, p. 119, fig. 3):

1. (ui giei absiei) GĀN^{GIS} SAM^{SE} GĪS^{GESTIN} sari istini manuri (ui PA₅ istini agauri) (Հաղի, դիմային կողմ, տող 39-42).
2. (ui gi absi) GĀN^{SAM} SE uldi šari istini manuri (ui PA₅ istini agauri) (Չեկեբի-բաղի, դիմային կողմ, տող 28-31).
3. (ui gi absiei) SAM^{SE} istini manu pulaue išinaue ari(-)butaue⁷ istini manu (ui PA₅ agauri) (Գյովեկեք, Դկ II, տող 29-32):

Բերված օրինակները թեև չեն մատնանշում ուղղակի համապատասխանություններ, սակայն հստակ գծագրվող օրինաչափություններից ելնելով կարող ենք ենթադրել, որ մեղ հետաքրքրող հատվածում, ամենայն հավանականությամբ, թվարկվել է մշակագաշտերի կամ հողատարածքների կոնկրետ շարք, գուցե այնպիսիք, որոնք հանդիսացել են նմանիմաստ գաղափարագրերի մինչ օրս անհայտ հնչյունագիր համապատասխանությունները կամ այնպիսիք, որոնք արտահայտել են հին արևելյան իրականության սեփականության ձևերը: Առկա սուղ նյութը, սակայն, ստիպում է ձեռնպահ մնալ կոնկրետ թարգմանություններ առաջարկելուց:

32բ-33) 32-րդ տողի և գրա շարունակությունը հանդիսացող արտահայտությունների թարգմանությունը հստակ է: Պարզապես անհասկանալի է մնում PA₅ գաղափարագրի մատուցումը որպես PA₅-e՝ արձանագրության հրատարակչի կողմից⁸⁰: Նման թյուրիմացությունն առկա է նաև առաջարկված մեկնաբանություններում⁸¹: Ինչ վերաբերում է tarmani՝ աղբյուր բառին, ապա այն նման ենթատեքստում հանդես է գալիս առաջին անգամ:

34) Այս տողի գոյությունը որևէ կասկած չի հարուցում, քանի որ դրա պահանջված փոքրաչափ հատվածում նշարվում են ուղղահայաց սեպի վերնամասի հետքեր⁸²:

Նախորդող մտքի tarmani-ն հիշատակող ուրարտական տեքստերի հստակ մեկնաբանվող օրինակներին (որոնցում նշվում է աղբյուր(ներ) կառուցելու մասին), սովորաբար, հաջորգում է արքայական տիտղոսաշարը: Տվյալ դեպքում մենք որևէ հիմք չենք տեսնում կորսված տողում տիտղոսաշար վերականգնելու համար, թեև հայտնի են ոչ քիչ թվով դեպքեր՝ միևնույն արձանագրության մեջ դրա կրկնություններով⁸³:

Մեր առաջարկած վերակազմության համար կարևոր կռվան ենք դիտում նախորդող տողերում արտահայտված ժխտողական բնույթի մտքերի շարունակվելու հնարավորությունը, այսինքն՝ կորսված տողում ենթադրում ենք համանման մեկ այլ արտահայտություն: Ըստ այդմ, որպես այդպիսին տեսնում ենք ui aisei LUGAL^{84MES}-se zadalani՝ ոչ էլ երբևէ արքաներն էին կառուցել միտքը⁸⁵, որով և կեզրափակվի ողջ

⁸⁰ SMEA, XLIV/1, p. 117 (In. 32), 134.

⁸¹ Նույն տեղում, էջ 134:

⁸² Տե՛ս Դկ II-ի լուսանկարը (SMEA, XLIV/1, p. 119, fig. 3) և արձանագրության ձեռագիրը (Դկ):

⁸³ КУКН, 101, лиц. стор., стк. 11-16, 27-32.

⁸⁴ LUGAL ընթերցումը ավանդական LUGAL-ի փոխարեն պայմանավորված է ազատ հատվածը լրացնելու միտումով, ինչպիսին որ Հկ I, 1-ին տողում է:

⁸⁵ Այս արտահայտությունը հանդիպում է Ռուսա Արգիշտորդու Արծկեի արձանագրության մեջ (КУКН, 427a, стк. 2-3): Համանման մեկ այլ միտք նշված է Սարգուրի Ար-

չարքը⁷⁶: Այս դեպքում վերը նշված ուղղահայաց սեպի հետքերը կարող են պատկանել MEŠ հոգնակիակերտ գաղափարագրին:

ՀԿ

1-2ա) auie LUGAL-se alie ulhulini. Ուրարտական վիմագրության մեջ երբևէ չհանդիպող ինքնատիպ ձևակերպումներից է: Սրա առաջին auie տերմինը կարելի է նույնացնել ուրարտական տեքստերի անեծքի բանաձևերում հանդիպող auē/i(e) կամ auiei բառերին: Դրանցից առաջինը, ըստ ընդունված մոտեցման, արտահայտել է ով որ, որևէ մեկը, ինչ-որ մեկը, երկրորդը՝ ինչ-որ տեղ, որևէ մի տեղ իմաստները⁸⁷: Նույն հատվածի alie-ն Մ. Սալվինին կապում է ali(e)՝ ասում է բայի հետ՝ LUGAL-se alie ulhulini՝ արքան ասում է. ulhulini: Այս դեպքում, սակայն, ունենում ենք ուրարտական տեքստերին ոչ բնորոշ կազմակերպում, նամանավանդ, երկրորդ տողում իսկ առկա է ^mRusase ali՝ Ռուսան ասում է արտահայտությունը: Այս տերմինը, թվում է, նույնանում է բաղում օրինակներով փաստարկված ali(e)-ին՝ այս, սա, սրանք, նշված(ը) մոտավոր նշանակությամբ: Իսկ a-li-i-e գրությունը, ըստ երևույթի, պայմանավորված է տողը լրացնելու միտումով (Հմմտ. LUGAL գաղափարագիրը նույն տողում շատ ավելի կարճ տարածություն ղբաղեցնող LUGAL-ի վոխարեն), նամանավանդ, ակնառու են առանձին սեպանշանների միջև առկա նշանակալի միջնատարածքները: Ինչ վերաբերում է ulhulini-ին, ապա այն, հակառակ առաջին հրատարակության մեջ տրված «մութ տերմին» որակմանը, ունի որոշակի թարգմանություն (տե՛ս վերը):

2բ-3ա) Հիշեցնում են Մահմուդ Արաբի վիմագրի առաջին երկու տողերը՝ [^mRusase ^{md}Sardurihinise] ali telzuše istini terubi⁸⁸, ուր ենթատեքստը հուշել է մինչ այդ անհայտ telzuše՝ բառի իմաստը՝ կարգադրություն, զոհարարություն կարգ կամ կարգադրագիր⁸⁹: Քննարկվող հատվածում ևս խոսվում է Ռուսա էրիմենայորդու կողմից զոհաբերության կարգ հաստատելու մասին, որին հաջորդում է որոշակի դրույթներով աստվածներին և աստվածություններին մատուցվելիք զոհաբերությունների քանակը:

3բ-4ա) Նշված տողերում արձանագրվել է զոհաբերության կարգի առաջին դրույթը՝ aše A^{MEŠ} suinini nikiduli: Ենթատեքստում հստակ չի թարգմանվում սոսկ nikiduli բայը, թեև մասնագիտական դրականության մեջ առաջարկվել են մի քանի նշանակություններ⁹⁰: Նշված տողերը հան-

գիշտորդու տարբերությունում՝ ui aišei LUGAL^{MI.Š}-se hajalani՝ ոչ էլ երբևէ արքաներն էին նվաճել տարբերակով (КУКН, 241С, стк. 29):

⁸⁶ Այս փաստը, մյուս կողմից, կարող է հուշել, որ կորսված հատվածում արձանագրվել է միայն մեկ տող: Ինչ վերաբերում է առաջարկված վերակազմությանը գրաֆիկ տեսանկյունից, ապա կարող ենք նշել, որ այն ճշտորեն համապատասխանում է կոթողի տողաչափի երկարությանը:

⁸⁷ М. Л. Х а ч и к я н. Заметки по хурритской и урартской грамматике. — "Древний Восток" (այսուհետև՝ ДВ), IV, Ереван, 1983, с. 176; КУКН, с. 439.

⁸⁸ КУКН, 392, стк. 2.

⁸⁹ Առաջարկված թարգմանությունների մասին տե՛ս М. S a l v i n i. I documenti, p. 78; I. M. D i a k o n o f f. On Some New Trends in Urartian Philology and Some New Urartian Texts.— AMI, Bd. 22, 1989, p. 91:

⁹⁰ КУКН, с. 347, прим. 34, с. 456.

դիպում են նաև Զվարթնոցի արձանադրության մեջ՝ մեկ էական տարբերությունը: Այստեղ խոսվում է Ջրամբարի⁹¹ (նշված է ծովային) Ջրերի մասին, այն դեպքում, երբ Զվարթնոցում առկա է Ջրանցք բառը (ase pili nikiduli)⁹²: Քննարկվող դրույթը, որը ենթադրում է որոշակի զոհաբերություններ, թվում է, մատնանշել է ոռոգման շրջանի սկիզբը: Իսկ գա առավել հավանական է դարձնում niki-d(u) բային տրվելիք հոսել թարգմանությունը՝ երբ Ջրերը ծովային հոսեն⁹³, այսինքն՝ երբ սկսվի Ջրօգտագործումը: Այս դեպքում, ծովային Ջրեր ասելով, թերևս, կարելի է ընկալել Ջրի աղբյուրներն ընդհանրապես⁹⁴:

4բ-ծա) Նման դրույթի համար խալդի աստծուն նախատեսված զոհաբերությունից ամենամեծ քանակն է, թեև, չի բացառվում, որ նույն քանակությունն է նշված եղել նաև Զելեբի-բադիի կոթողում, որի համապատասխան տողերը չեն պահպանվել⁹⁵: Նույն դրույթի համար Զվարթնոցի արձանագրությունը նախատեսում էր մեկական ուլ և ոչխար: Ինչ վերաբերում է մասնագիտական գրականության մեջ nipsidulini-ի համար առաջարկված թող-ողջակիզվի թարգմանությունը, ապա այն ունի նաև հնագիտական հիմնավորում⁹⁶:

6բ-7) Մասնագիտական գրականության մեջ UDU-se-ն նույնացվել է ուրարտական ^(UDU) sū-se-ին՝ ոչխար, փոքր եղջերավոր կենդանի նշանակությունում, -se-ն դիտվել է որպես հնչյունական լրացում և, նյութի սղություն պայմաններում, մատուցվել UDU-se UDU⁹⁷, այնուհետ նաև UDU-se տարբերակներով: Այժմ արդեն միանշանակ UDU.SE⁹⁸ պարարտ ոչխար իմաստը վերագտած դադափարագրերի այս կոմբինացիան⁹⁷, կարելի է փաստել, կիրառվել է ուրարտական չորս արձանագրություններում, գերագանցապես՝ որպես աստվածներին զոհաբերվող կենդանի: Դրանց ամենամեծ լիսաքանակը հայտնի է Արգիշտի I-ի խորհրդանշանային տարբերություններից⁹⁸՝ ավելի քան 33.203: Ընդ որում, հետաքրքիր է, որ դրանք ձեռք են բերվել ուրարտական արքայի կառավարման 7-րդ տարում (մ.թ.ա. 780թ.⁹⁹) մերձուրմյան տարածքներ ձեռնարկված արշավանքի ընթացքում: Հայտնի

⁹¹ KYKH, 421, ԵՏԿ. 17.

⁹² SMEA, XLIV/1, p. 137. Ուշադրության են արժանի ծովային Ջրեր, ծովային աստվածներ արտահայտությունները, որոնք, թվում է, ուրարտական սեպագրում արտահայտել են նաև Ջրային տարերքի հետ կապված ընդհանրություններ (sue – ջուր): Այս առումով համեմատելի են հայ իրականության Միրանի ծովը՝ երկնային Ջրերի ընդհանրությունը, և այն մարմնավորող Մովինարը՝ ծովերի (Ջրերի) գեղուհին (Մ. Ա. Բ. Գ. Ե. Երկեր. հ. 5, Երևան, 1975, էջ 70-72):

⁹³ Նման ենթադրության համար հիմք է ծառայում այն փաստը, որ «երկնային Ջրերի» դիմաց խալդի աստծուն նախատեսված զոհաբերությունները երկու տեքստերում համընկնում են՝ UDU.SE UDU, այն է՝ (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար:

⁹⁴ Մ. Հ. մ. Ե. Ե. Ե. նշվ. աշխ., էջ 92, ծանոթ. 17:

⁹⁵ KYKH, 407, օճօր. ԵՏԿ. 26; M. S a l v i n i. The Inscriptions of Ayanis. p. 254 (Ay-susi I, In. 10).

⁹⁶ UDU ŠE (UDU.NIGA)՝ պարարտ (բառացի՝ կերակրված) ոչխար ընթերցումն առաջարկել է Յ. Ֆրիդրիխը (J. F r i e d r i c h. Aus verschiedenen Keilschriftsprachen. № 1-2 – "Orientalia", NS. IX, 1940. S. 214-215).

⁹⁷ Համապատասխանում է աքք. šu'u marû-ին՝ նույն նշանակությամբ:

⁹⁸ KYKH, 173, III, ԵՏԿ. 43. Հմտ. B. A n d r é - S a l v i n i, M. S a l v i n i, Gli annali di Argisti – Note e collazioni. – SMEA, Fasc. XXX. Roma, 1992, p. 16.

է, որ «պարարտ ոչխարներ» այս տարածքներից, իսկ մասնավորապես Մանայի թագավորութունից, ձեռք են բերել նաև ասորեստանցիները և՛ որպես ընծա, և՛ որպես հարկ⁹⁹:

Ց) Այս, ինչպես նաև Հկ I, 19-րդ տողում կրկնվում է DINGIR^{MES} – ԳNIN շարքը: Երկու տողերում էլ, թերևս գրագրի անփութութան հետևանքով ԳNIN՝ աստվածուհի¹⁰⁰ գաղափարագրից հետո տեղ չի գտել հոգնակիակերտ MEŠ ցուցիչը, ինչպես նաև ակնկալվող -ue (‘inuana-ue) հնչյունական լրացումը, թեև վերջինս պարտադիր չէ. նկատելի է, որ տեքստում արձանագրված ոչ բոլոր աստվածութունների գաղափարագրերն են օժտված հնչյունական լրացումներով: Հարկ է նաև նշել, որ ԳNIN գաղափարագիրը մինչ արձանագրության հրատարակութունը հայտնի էր եղակի օրինակով ուրարտական Ռուսասխինիլի Բիլբանիկայի քաղաքի (ներկայիս Այանիսի) susi-տաճարի ծավալուն արձանագրության տվյալներից¹⁰¹:

9-10) GUD^mRusainie ԳGI? – արձանագրության մեծ հետաքրքրություն ներկայացնող հատվածներից մեկն է, քանի որ ԳGI աստվածությունն ոչ ուրարտական է. ոչ էլ սեպագիր այլ աղբյուրներում վկայված չէ¹⁰²: Նմանօրինակ արտահայտություն հայտնի է նաև Չելեբի-բաղիի արձանագրությունից, ուր, սակայն, աստծու անունը կամ գաղափարագիր խորհրդանիշը չի հիշվում (UDU^mArgištinie DINGIR՝ ոչխար՝ Արգիշտիի աստծուն)¹⁰³: Եթե դիմենք հին առաջավորասիական այլ աղբյուրների, ապա կարող ենք դրանցում տեսնել աստվածությունների, որոնցից յուրաքանչյուրը, լինելով որոշակի դործառույթների կրողը, նաև հանդես է գալիս որպես այս կամ այն անհատի հովանավոր¹⁰⁴: Այս պարագայում, գուցե, նշվել է Ռուսայի հովանավոր կամ սլահապան ինչ-որ աստվածություն: Այստեղ կարելի է հիշել ուրարտական արխիվի սլահապանված նամակների zanidabi (:) TI DINGIR : guni՝ թող իրապես սիրելի՛ լինի կյանքը (քո) աստծուն արտահայտությունը¹⁰⁵: Արդյո՞ք այս ձևակերպմամբ նկատի է առնվել հասցեա-

⁹⁹ H. T a d m o r. The Inscriptions of Tiglath-Pileser III King of Assyria (Critical Edition, with Introductions, Translations and Commentary). Jerusalem. 1994. pp. 100-101 (Stele IB, In. 20).

¹⁰⁰ Կinua տերմինի դիցուհի, աստվածուհի նշանակությունը պարզել է ուրարտագետ Ն. Հարուրթյունյանը (KYKH, 449): Համադրությունը հավաստում է դուրս Այանիսի արձանագրության տվյալներում ի դեմս ԳNIN^{M:5}-ue-ի՝ Գinuanaue՝ դիցուհիներ(ին) բառի գաղափարագիր տարբերակի:

¹⁰¹ M. S a l v i n i. The Inscriptions of Ayanis, p. 254 (Ay-susi II, In. 2).

¹⁰² Մյուս կողմից, հնարավոր է մոտեցման մեկ այլ՝ ոչ սլահապան հովանական տարբերակ, որտեղ աստված-ը կարող ենք ընդունել իր բուն գաղափարագիր նշանակությամբ՝ DINGIR, իսկ gi-ն՝ որպես հնչյունական լրացում՝ տրական հոլովի ցուցիչ, այսինքն՝ պարզապես ^mRusainie DINGIR-gi՝ Ռուսայի աստծուն թարգմանությամբ:

¹⁰³ KYKH, 409, օժոր. стор., ցրк. 6, 32. Այս երևույթի վաղ օրինակը հայտնի է Սարգուրյան տարեգրության կրկնօրինակ-կոթողից: Վերջինիս դիմային կողմի 13-րդ տողում ընթերցվում է (մեկ) ոչխար սարգուրյան աստվածներին արտահայտությունը (KYKH, 242, лив. стор., ցрк. 13 и прим. 24):

¹⁰⁴ Խեթական արքա Մուրսիլիս II-ի հովանավոր աստվածությունը Արիննա քաղաքի Արևի աստվածուհին էր: Խեթական մեկ այլ արքայի՝ Խաթթուսիլիս III-ին «հովանավորում էր» իշտար դիցուհին: Դատելով KYKH, 277 տեքստից, ուրարտական արքա Սարգուրի II-ի հովանավոր աստվածությունը Կուեռան էր:

¹⁰⁵ KYKH, 433, ցрк. 4; 446, ցрк. 5.

տիրոջ հովանավոր և պահապան աստվածությունը՝ չի կարելի բացառել¹⁰⁶: Համենայն դեպս, նման երևույթ դիտվում է տարալեզու սեպագիր այլ աղբյուրներում: Ինչ վերաբերում է գրելաձևին, ապա այն, իրոք, հիշեցնում է միջագետքյան ^dGI-bil-ը՝ կրակի և լուսի աստվածությունը¹⁰⁷: Այս առումով, եթե իրոք ^aGI գաղափարագիրն առնչվում է նշված երևույթների հետ¹⁰⁸, ապա հնարավոր է դրա տակ ենթադրել ուրարտական դիցարանի արևի աստված Շիվինին, ավելի ճիշտ՝ նրա հատկանիշներից մեկը՝ լուսյը: Շիվինին ոչ միայն արևի աստվածն էր, ինքը՝ Արևը (siuini), այլև լուսյը: Այս դեպքում ^{GUD}AB ^mRusainie ^dNIN (մեկ) կով՝ Ռուսայի (տիրուհի) աստվածուհուն արտահայտության տակ կարելի է տեսնել Շիվինիի կնոջը՝ արշալուսի դիցուհի Տուչպուեային: Նրանք երկուսն էլ, վերջին հաշվով, մարմնավորել են լուսյը¹⁰⁹:

11-15) 11-րդ տողում նշված ^dAniqu-gi դիցանվան վերջին՝ gi նշանը Մ. Սալվինին համարում է արմատական՝ առաջարկելով Անիկուգի ընթերցումը¹¹⁰: Մինչդեռ այն ոչ այլ ինչ է, եթե ոչ եզակի թվի տրական հոլովի ցուցիչ, ինչպիսիք են նաև -e, -i և վերը նշված -gi (-gie) նշանները¹¹¹: Ուրարտական վիմագրության մեջ նման գրելաձև հանդիպում է ոչ մեկ անգամ¹¹²: Գյուվելեքի վիմագրից պարզ է դառնում նաև, որ Անիկուն աստվածուհի է. նրան զոհաբերվել է կով (^uAB): Այս կենդանիները, ինչպես հայտնի է, մատուցվում էին բացառապես աստվածուհիներին:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Աշշուր (^aas-sur) աստուհի հիշատակությունը նշված հատվածի 12-րդ տողում, եզակի երևույթ ուրարտական վիմագրության մեջ: Միջագետքյան աստվածություններից հիշատակվում է նաև Մարդուկը (^aAMAR.UTU)՝ Կարմիր բլուրի տեքստերից մեկում¹¹³, պայմանավորված, ինչպես ենթադրվել է, Արարատյան դաշտավայրում բաբելական բնակչության առկայությանը¹¹⁴: Աշշուր աստուհի հիշատակությունը, սակայն, պետք է համարել այլ իրողություն արդյունք: Ինչ վերաբերում է ուրարտական տեքստերում կիրառված միջագետքյան աստվածությունների գաղափարագիր համապատասխանություններին, ապա դրանց տակ ուրարտական դիցարանի աստվածությունների դիտարկումը կասկածից դուրս է¹¹⁵:

¹⁰⁶ Հմմտ. Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 34:

¹⁰⁷ R. B o r g e r. Assyrisch-babylonische Zeichenliste, S. 81f. (№ 85), S. 104 (№ 172. Gibil6 (^dNE.GI)); The Assyrian Dictionary (Chicago, vol. 5, 1956), pp. 93-94 (girru).

¹⁰⁸ SMEA, XLIV/1, p. 138.

¹⁰⁹ Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 46:

¹¹⁰ SMEA, XLIV/1, p. 123.

¹¹¹ Ի դեպ, այս մասին նշում է նաև Միրյո Սալվինին հոդվածի էջերից մեկում՝ արձանագրության ubardu-gi և ubardu-i տերմինները համադրելիս (SMEA, XLIV/1, p. 140):

¹¹² КУКН, с. 345, прим. 12.

¹¹³ КУКН, 427, стк. 8.

¹¹⁴ Н. В. А р у т ю н я н. Новые урартские надписи Кармир-блур. Ереван, 1966, с. 96-97.

¹¹⁵ Բացառություն պետք է համարել Օձասարի ուրարտական արձանագրությունը, որտեղ Սարգուրի անունը գրվել է նոր ասորեստանյան տեքստերից հայտնի Իշտարուրի տարբերակով, միջագետքյան Իշտար աստվածուհուն արտահայտող ^dXV գաղափարագրի կիրառմամբ (^dXV-dur₃ = Istar-duri):

15բ-17ա) Նշված տողերում եզրափակվել է զոհաբերության կարգի առաջին դրույթը՝ *inini TAG-si ase A¹¹⁶ nikiđuli* այս զոհաբերությունը երբ ջրերը հոսեն¹¹⁷ արտահայտությունը, սկիզբ դնելով երկրորդին *ase A¹¹⁶ esia siuli*: Հետազոտողների մոտ առկա են տարակարծություններ նշված արտահայտության վերջնահատվածի ընթերցումներում. դրանք դիտվում են *և՛ մեկ (esiasiuili)*, *և՛ երկու բառ (esia siuli)*: Եթե նկատի ունենանք, որ զոհաբերությունների առաջին խումբը վերաբերում է ծովային, այլ խոսքով «երկրային» ջրերին, ապա չի բացավում, որ երկրորդ խումբը վերաբերի այն ջրերին, որոնք, տեղումների տեսքով, ոչ պակաս անհրաժեշտ են և ցանկալի երկրագործության համար: Նշված վանկերի տակ երկու բառ դիտելու հնարավորությունը միանգամայն ընդունելի է, նամանավանդ՝ դրանց տրված հստակ բացատրությունները նկատի ունենալիս¹¹⁶: Ըստ այդմ, միանգամայն ընդունելի է քննարկվող հատվածի համար մասնագիտական գրականության մեջ արդեն իսկ առաջարկված երբ ջրերը երկնքի թափվեն¹¹⁷ թարգմանությունը¹¹⁷:

17բ-20) 17-րդ տողից սկսվում է զոհաբերությունների նոր շարք՝ աստվածությունների նույն հաջորդականությամբ: Միակ նկատելի տարբերությունը նրանց մատուցվելիք զոհաբերությունների շատ ավելի փոքր թվաքանակներն են:

21) Միանգամայն իզուր է Մ. Սալվինին հիշյալ արտահայտությունը սարանջատում հաջորդող մտքից դիտարկելով դրանք որպես երկու առանձին տողեր (տող 21-22)¹¹⁸: Կարծում ենք, վնասված հատվածը բավարար է դրանք մեկ տողում վերականգնելու համար, մեկ տարբերությամբ: Այստեղ հարկ չկա նույնությամբ, Հկ I, տող 11-ի օրինակով կրկնել III UDU՝ այն է՝ երևք ոչխար արտահայտությունը, ինչպես վարվել է արձանագրության հրատարակիչը: Հկ I, 17-րդ տողից, մասնավորապես, դիտվում է մատուցվելիք զոհաբերության կրճատում թողնելով մեկ պարարտ ոչխար և մեկ ոչխար ինչպիսի, մեկական ոչխար մնացյալ աստվածությունների համար: Այս չափաքանակը հաղիվ թե շրջանցեր ծովային աստվածներին: Հետևաբար, հարկ չկա կորսված հատվածում վերականգնել «երևք» թվանշանը՝ երևք ուղղահայաց սեպեր, ինչը թույլ չի տալիս նաև տողի երկարությունը:

22-24) Նշված տողերը և մասնավորապես աստվածությունների հաջորդականությունը համապատասխանում է 12-14-րդ տողերին, այդ իսկ պատճառով կորսված տեքստը վերականգնվում է առանց որևէ դժվարության:

¹¹⁶ *Սուրբիերենի բառապաշարի հիման վրա այս տերմիններին տրվել են երկնք (ešā, հմտ. խուրբ. ešā-ն) և թափվել, տեղալ (si(u), հմտ. խուրբ. šiyā-ն) իմաստները (տե՛ս M. A. X a č i k j a n. Хурритский и урартский языки, с. 46 (17), 48 (63); I. M. D i a k o n o f f. AMI, Bd. 22, 1989, p. 94 and nt. 67):*

¹¹⁷ *M. A. X a č i k j a n. Хурритский и урартский языки, с. 50, прим. 12; И. М. Дьяконов. ВБС, VIII, с. 65, прим. М. Salvini. SMEA, XLIV/1, p. 139; КУКН, с. 443.*

¹¹⁸ *SMEA, XLIV/1, p. 122 (Ins. 21-22), 123f.*

25-26ա) Չնայած *Մ*. Սալվինին ձեռնպահ է մնացել պակասող հատվածը վերականգնելուց, սակայն, տրված մեկնաբանություններում, ¹¹⁹rusahina-idi գրելաձևի ուղևորական հոլովը նկատի ունենալով, հնարավոր է համարում uladi` գնացի, ուղևորվեցի վերակազմությունը` գտնելով նաև, որ հազիվ նշմարելի ուղղահայաց «երկար» սեպի հետքերը կարող են պատկանել di վանկին, պայմանով, որ բացակայեն երկու հորիզոնական «կարճ» սեպեր նշանակող հատումները¹²⁰։ Նման երևույթ դիտվում է արձանագրություն վերջնահատվածներում¹²¹։ Ամեն դեպքում, թվում է, հիմքեր չկան այս կամ նմանատիպ վերակազմության համար, թեկուզև այն պատճառով, որ առաջարկված միտքը օրգանապես չի կապվում տեքստին։ Ռուսախինիլի հիշատակումը, կարծում ենք, առնչվում է նախորդող տողաչարի, այն է` մատուցվելիք զոհաբերությունների հետ։ Մեր ենթադրություններ, Ռուսախինիլին կարող էր նշվել որպես մի վայր, ուր կատարվելու էին զոհաբերությունները։ Ըստ այդմ, հնարավոր է թվում [i-ni-li?] ^mru-sa-hi-na-i-di [ur-bu-li¹²¹]-ni (?) վերակազմությունը` սրանք Ռուսախինիլի (քաղաքում) թող-զոհաբերվեն թարգմանությունը¹²²։ Առաջարկված լրացումները, ի դեպ, չեն հակասում պակասող հատվածների և պահպանված որոշ սեպահետքերի ընձեռած հնարավորություններին։

26բ-28ա) 26-րդ տողից սկսվում է Ռուսա էրիմենայորդու արքայական տիտղոսաչարը, ինչի ընթացումն ու պակասող հատվածների վերակազմությունները նշված տողերում տեքստի առաջին հրատարակություն մեջ տրված են միանգամայն ճշգրիտ։

28բ-30) Այս և հաջորդող տողում սկսվում էր Ռուսա էրիմենայորդու արքայական տիտղոսաչարի եզրափակիչ` alusi ^{URU}tušpa(e) URU` տերը Տուշպա քաղաքի արտահայտությունը, ինչպիսին առկա է ուրարտական այս արքայի տիտղոսաչարը պահպանած բոլոր ինը արձանագրություններում։ Սրա փոխարեն, սակայն, հստակ ընթացվում է (նա), որի առջև իմաստն արտահայտող բառը` ուրարտական վիմագրության մեջ առաջին անգամ հանդիպող aluki-kai բարդված ձևով։ Այս միտքը, թերևս, հարկ է

¹¹⁹ Նույն տեղում, էջ 140.

¹²⁰ Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՀԿ II, տող 26-ի DINGIR, ni, uš, տող 27-ի sa, ni, տող 28-ի ü, տող 29-ի di, DINGIR, bar, ni նշաններին, որոնցում բացակայում են հորիզոնական «կարճ» սեպեր նշանակող հատումները։

¹²¹ 27-րդ տողի պահպանված մասի սկզբնահատվածում նկատվում են սեպանշան հիշեցնող հետքեր, որը կարելի է ընդունել որպես li_x (LIS)։ Այս դեպքում, սակայն, հարկ կլինի բացատրել, թե ինչու է այն արձանագրվել տողի վերին եզրում։ Ինչ վերաբերում է մեր առաջարկած urbulini` թող-զոհաբերվեն վերակազմությանը, ապա այս միտքը կարելի է վերականգնել նաև գաղափարագիր` TAG-si-ni-ni տարբերակով։ Նման կազմություն, համենայն դեպս, հանդիպում է ուրարտական տեքստերում (KYKH, 424, ԾԿ. 19; M. S a l v i n i. The Inscriptions of Ayanis, p. 257 (Ay-susi III, ln. 4))։

¹²² Առաջարկված վերակազմությանը ինչ-որ չափով հակասում է Ռուսախինիլի -idi ուղևորական հոլովաձևի առկայությունը տեղական հոլովի -a-ի փոխարեն։ Ուրարտական տեքստերում, սակայն, առկա են տասնյակ օրինակներ, որոնցում ակնկալվող հոլովաձևերի փոխարեն կիրառվել են -(i)di վերջավորությունները (Հմմտ. sate ^{G18}uduue : ^madiabdi ari : ^mlubšusini-di (պահանջվող ^mlubšusini-e-ի փոխարեն. տե՛ս KYKH, 393, ԾԿ. 12 ՇԱ.)։ Փաստը կարելի է պայմանավորել տեքստերի հեղինակների լեզվամտածողությամբ. նշված օրինակը կարող էր դրսևորվել ցանկացած մտքի մեջ, եթե այն արտահայտել է շարժում, ուղղություն և ունեցել հանգման կետ։

ընդունել որի-Համար՝ իմաստով՝ ելնելով Հաջորդող տողերի մեկնաբանությունից: Իսկ դրանց, Դկ I, 7-րդ տողի հիման վրա, որին նմանվում է ենթատեքստը, տայիս ենք որի-Համար Խալդի (աստվածը), աստվածները (բոլոր) թագ¹²³ կասեցան փառահեղ¹²⁴ թարգմանությունը:

Տեքստը, թեև վստահությամբ չենք կարող պնդել, մնացել է անավարտ վերջանալով aluki e'a որը նաև բառերով:

31-33) Նշված երեք տողերը, որոնց մի հատվածը պահպանվել է կոթողի ստորին բեկորի հակառակ կողմի վրա, չեն արձանագրվել: Դատարկ տողերի առկայությունը ուրարտական արձանագրություններում առավել հաճախ է հանդիպում սկսած Ռուսա Արգիշտորդու իշխանության շրջանից: Չարձանագրված կամ անավարտ տողեր ունեն Ռուսախինի Քիլբանիկայի քաղաքի հիմնադրման¹²⁴, նույն քաղաքի susi-տաճարի¹²⁵, իսկ այժմ նաև Ռուսա Իրիմենայորդու քննարկվող արձանագրությունները¹²⁶: Ուրարտական վիճակագրության մեջ եզակի «տողադարձի» անթույլատրելի փաստի հետ գործ ունենք Արգիշտի Ռուսայորդու Շիշեի վիճակագիր կոթողում¹²⁷: Գյովելեքի կոթողի վերջնահատվածում նկատվում են վիճակագրական բազմաբան խախտումներ մի շարք սեպանշանների բաղկացուցիչ մաս կաղմող հատումների անթույլատրելի բացակայություն և անգամ սեպախմբի սխալ փորագրություն՝ Ռուսայի Հայրանվան մեջ¹²⁸, ի լրումն նկատվող որոշ շեղումների ուրարտական սեպագրի քերականական կանոններից: Այս ամենը ինչ-որ տեղ վկայում է ուրարտական դպրության կայուն ավանդույթների անկման մասին, ինչը, միգուցե, պայմանավորված էր նրա դեպի միջագետքյան սեպագիր գպրություն կատարած շրջադարձով: Դրա վառ վկայությունը, թերևս, այս շրջանում դիտվող ուրարտական «եռանկյունաձև» սեպանշանների փոխարինումն է միջագետքյան տիպի «մեխանման» օրինակներով:

Վերջին շրջանում ուրարտագիտության ձեռք բերած նոր տվյալներն ու մի շարք հարցերի վերարձարժումը թույլ են տվել վերանայելու ուրարտական տերություն անկման շրջանի պատմությունը: Գիտական շրջանակներ-

¹²³ Այս դեպքում ubardugi-ի կրկնություն կարող ենք դիտել ոչ թե ubarduila-ն (կամ ubardui(-)le-ն, ինչպես ընթերցում է Մ. Սալվինին), այլ ubardui-ն: Ինչ վերաբերում է Հաջորդ սեպանշանին, ապա այն նմանվում է le-ի, բայց և հիշեցնում la-ն (SMEA, XLIV/1, p. 121, fig. 5): Վանկադիր la-ն կարող ենք ընդունել որպես գաղափարագիր (LA, աքք. lafū)՝ դեղեցիկ (դեղեցկություն), փառահեղ, վեհաշուք նշանակությամբ (R. B o r g e r. Assyrisch-babylonische Zeichenliste, S. 67 (№ 55)): Իսկ եթե, այնուամենայնիվ, արձանագրվել է le, ապա համաձայն Ի. Մ. Դյակոնովի դիտարկումների (datqedulite(!) բառի օրինակով), բառավերջի le-ն կարող է հանդիսանալ դերանվանական ցուցիչ՝ արտահայտելով իրեն, իրենց իմաստը (I. M. D i a k o n o f f. AMI, Bd. 22, p. 94): Այս դեպքում հարկ է չըրացառել նաև ubarduite(!) ընթերցումը՝ կամեցան-իրեն¹²⁷ թարգմանությամբ (Համտ. M. S a l v i n i. SMEA, XLIV/1, p. 140):

¹²⁴ KYKH, 412b, ԵՊԿ. 6-7; Таб. CXLIII, 1.

¹²⁵ M. S a l v i n i. The Inscriptions of Ayanis, fig. 10-12 (Ay-susi VI, In. 6).

¹²⁶ SMEA, XLIV/1, p. 121 (fig. 5).

¹²⁷ M. S a l v i n i et al. Haldi's Garrison – Haldi's Protection. The Newly Found Rock Inscription of Argišti II in Shisheh, near Ahar (East Azerbaijan, Iran).– SMEA, Fasc. XLIII/1, 2001, pp. 25-37 (fig. 7, Ins. 12-13).

¹²⁸ Բացակայում է Իրիմենա անվան Դ սեպախմբի երրորդ ուղղահայաց սեպը, ինչի հետևանքով այն վերածվել է Խ սեպանշանի:

րի կողմից ավելի ու ավելի մեծ ընդունելություն է գտնում այսպես կոչված «սրոհման տեսությունը», ըստ որի, Ուրարտուի՝ որպես միասնական երկրի կործանումը տեղի է ունեցել շատ ավելի վաղ, քան շրջանափոխ ավանդական մ.թ.ա. 590/585 թթ.¹²⁹: Թերևս հարկ է ընդունել, որ սեպագիր աղբյուրներից հայտնի մ.թ.ա. VII դ. ուրարտական արքաների գահակալությունները, Ռուսա II-ից հետո, չէին կարող ներկայացնել շղթայի շարունակվող օղակներ՝ արքաների հաստատուն և միանձնյա իշխանություն տարիներով. ճգնաժամ ապրող պետությունում հազիվ թե լինեին նման կալությունները¹³⁰: Որպես դրա փաստական ապացույց կարելի է նշել Ռուսա Արգիշտորդու օրոք ուրարտական տերություն քաղաքական նոր վերելքին ու տնտեսության աննախադեպ ծաղկմանը հաջորգած համընդհանուր անկումը, որը գիտվում է և՛ սեպագիր, և՛ հնագիտական աղբյուրներում¹³¹: Ուրվագծելով հին արևելյան իրականությունը խիստ բնորոշ պատկեր¹³²: Այս ենթատեսքստում չափազանց կարևորվում է Ռուսա էրիմենայորդու

¹²⁹ Առաջարկված տարեթվերը տատանվում են մ.թ.ա. 660-ից 610-ական թվականների սահմաններում: Առավել մանրամասն տե՛ս S. K r o l l. Urartus Untergang in anderer Sicht – IM, Bd. 34, 1984, S. 170; K. K e s s l e r. Zu den Beziehungen zwischen Urartu und Mesopotamien.– In: V. H a a s (Hrsg.). Das Reich Urartu. Konstanz, 1986, S. 72-81 (Das Ende Urartus in der schriftlichen Überlieferung); Э. А. Г р а н т о в с к и й. О хронологии пребывания киммерийцев и скифов в Передней Азии. – “Российская Археология” (այսուհետև՝ РА), 1994, № 3, с. 46; И. М. Д ъ я к о н о в. Киммерийцы и скифы на Древнем Востоке. – РА, 1994, № 1, с. 115 և այլուր: Առավել մանրամասն տես նաև U. H e l l w a g. Der Untergang Urartus: eine historisch-archaologische “Fall”- Studie (Magisterarbeit), München, 1998.

¹³⁰ Նույնը տեսնում ենք Ասորեստանում: Հազարամյա այս երկիրը՝ պետականության խորը ավանդույթներով, իր գոյություն տարիների վերջին քառորդում ապրեց դահակալական ռուռն պայքար. հայտնի են մոտ մեկ տասնյակ անձինք, որոնք կամ իշխել են, կամ հավակնել են իշխելու (J. E. R e a d e. Assyrian eponyms, kings and pretenders, 648-605 BC.– “Orientalia” NS, vol. 67, 1998, pp. 255-265): Այս պատկերը հազիվ թե խորթ լինեին նաև Ուրարտուին:

¹³¹ Ռուսա II-ի հիմնադրած Բաստամը, ըստ հետազոտողների, ոչ միայն կառուցվել, այլև կործանվել է նրա օրոք (J. B o e s s e c k, M. K o k a b i. Tierknochenfunde.– “Bastam II, Ausgrabungen in den urartaischen Anlagen 1977-1978”. Berlin, 1988, S. 175f; W. K l e i s s. Bastam I.-Ausgrabungen in den Urartaischen Anlagen 1972-1975. Berlin, 1979, S. 137-149; И. Н. М е д в е д с к а я. Периодизация скифской архаики и древний Восток. – РА, 1992, № 3, с. 95-105; W. K l e i s s. Azerbaijan II: Archaeology.– E. Yarshater (ed.), Encyclopædia Iranica, vol. III, 1989, pp. 217f. Հղված գրականությանը: Այս նույն շրջանում նման ճակատագիր է վիճակվել ուրարտական տերության մեկ այլ կենտրոնի՝ Ռուսախիսիլի էրդուրուկայիին (A. Ç i l i n g i r o ğ l u. Urartu krallığı tarihi ve sanati. Izmir, 1997, s. 46): Ի դեպ, արտահայտված մեկ այլ կարծիքում առաջ էր քաշվում հիշյալ Ռուսախիսիլիի՝ երկրաշարժից կործանված լինելու հնարավորությունը (A. Ç i l i n g i r o ğ l u, M. S a l v i n i. When was the Castle of Ayanis Built and What is the Meaning of the Word ‘suri’?.– In: “Anatolian Iron Ages IV”, “Anatolian Studies”, vol. 49, 1999, pp. 55-60, Ինչպես նաև A. Ç i l i n g i r o ğ l u. The Reign of Rusa II: Towards the End of the Urartian Kingdom.– In: R. A s l a n, et. al. (eds.). „Mauer Scau, Festschrift für Manfred Korfmann“, Bd. I. Remschalden-Grunbach, 2002, pp. 483-489. Հմմտ. A. Ç i l i n g i r o ğ l u, M. S a l v i n i, The Historical Background of Ayanis.– “Ayanis I”, p. 24:

¹³² Այս երևույթը բնորոշող ընդհանուր դրույթները տե՛ս Ա.Վ. Ք ո ս յ ա ն. Հին Առաջավոր Ասիայի և էգեյան ծովի ավազանի պատմության պարբերազման շուրջ.– «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (այսուհետև՝ ՄՄԱԵԺ), XVІІІ, 1998, էջ 124-140:

իշխանության ժամանակաշրջանի հստակեցումը՝ դրան հետևելիք եզրահանգումներով: Այս առումով Գյուղելեքի արձանագրությանը վիճակված է խաղալ կարևոր սկզբնաղբյուրի դեր:

Ուրարտական արքաներ Արգիշտի Ռուսայորդու և Ռուսա Արգիշտորդու ժամանակագրական հաջորդականությանը կարող ենք հետևել ոչ միայն ելնելով նրանց անուն-հայրանուններից: Հաջորդականությունը նկատվում է նաև անուղղակի այս արքաների թողած արձանագրություններում: Դրանցում, ընդհանուր բանաձևերից դատ, առկա են ոճական ընդհանրություններ, ասես, հեղինակել է նույն գրագիրը: Այս նույնը նկատվում է նաև ուրարտական քննարկվող արձանագրությունում: Ինչպես իր տեղում նշվեց, ակնառու են Գյուղելեքի արձանագրության ընդհանրությունները Արգիշտի Ռուսայորդու Հաղիի և Ձիեբի-բաղիի վիճագրերի հետ, ընդհանրություններ, որոնք չեն հանդիպում այլուր: Իսկ սա ինչ-որ տեղ մատնացույց է անում արձանագրության կաղաման ժամանակը՝ շրջան, որը չսպեք է շատ հեռու լիներ Արգիշտիի իշխանության տարիներից: Նշված փաստը գալիս է լրացնելու մասնագիտական դրականության մեջ վաղուց շրջանավոր մեկ այլ տեսակետի՝ Արգիշտիի և էրիմենայի, հետևաբար և Ռուսա էրիմենայորդու մերձավորության մասին գոնե ժամանակագրորեն¹³³: Իսկ այստեղ վերստին ծագում է առանցքային հարցը. վերջապես ո՞վ էր էրիմենան՝ Արգիշտի II-ի որդի՞ն, նրա մերձավոր հարազատը, ուրարտական արքայատոհմի կրտսեր ճյուղի ինչ-որ ներկայացուցիչ, թե՞ դահլը գավթած բռնասպետ՝ այս կամ այն էթնիկ խմբից¹³⁴: Հարցերի շարքը կարելի է շարունակել: Դրանց պատասխանը ստանալուց հետո միայն, թեև, կարելի կլինի հստակեցնել ինչպես Ռուսայի կառավարման շրջանը (Հակառակ մասնագիտական գրականության մեջ ներկայումս տրվող թվագրումների), այնպես էլ տեղության անկման դարաշրջանի բաղադրում հարցեր: Այժմ սոսկ կարող ենք ենթադրել, որ նա եղել է ներկայացուցիչը մի ժամանակաշրջանի, որը կարելի է բնորոշել «ճգնաժամային» տեղության անկման ակնհայտ նշաններով, որոնց թվում հարկ է շեշտել ուրարտական պետության կամ արդեն դրա մի հատվածի վրա ասորեստանյան ազդեցության աննախադեպ աճը¹³⁵: Հիշենք մ.թ.ա. 653/2թ. ասորեստանյան արքա Աշշուր-ան-սալիի հիշատակած Ռուսային (Ռուսա

¹³³ И. М. Дьяконов. Урартские письма и документы, с. 57; M. Salvini. Geschichte und Kultur der urartäer. Darmstadt, 1995, S. 114f., 207; A. Çilingiroğlu. M. Salvini. The Historical Background of Ayanis, p. 24; A. T. Smith. The Making of an Urartian Landscape in Southern Transcaucasia. – “American Journal of Archaeology”, vol. 103, 1999, № 1, p. 50 (Table 3).

¹³⁴ էրիմենայի հայրանունը նրա թողած միակ աղբյուրում չի պահպանվել (KYKH, 433): Որոշ սեպահետքերի հիման վրա առաջարկվել են ասորեր մեկնարանություններ, այդ թվում կասկածի տակ առնելով սեպագիր տեքստի՝ էրիմենային սլատկանելու հնարավորությունն ընդհանրապես: Առկա մոտեցումների մասին առավել մանրամասն տես Ա. Մոսկովսկայն. Կարևոր մի ուղղում (Կարմիր ըլուրի սեպագիր սալիկներից մեկի առնչությունը). – ՄՄԱԵԺ, XIX, 2000, էջ 133-139:

¹³⁵ Ռուսա էրիմենայորդու մինչ օրս հայտնի մեկ տասնյակ տեքստերում, որքան էլ տարօրինակ է, երբևէ նա չէր հիշվել որպես Բիայնիլի երկրի արքա. արքայական տիտղոսաշարերը նրան ներկայացնում են որպես «հզոր արքայի», «մեծ արքայի» և Տուչպա քաղաքի տիրոջ՝ կասկածի ենթարկելով, սակայն, ողջ Բիայնիլիի տարածքում նրա իշխելու հնարավորությունը: Գյուղելեքի կոթողը թեև որոշ չափով ցրում է այս կասկածը, բայց, այնուամենայնիվ, չի վերացնում:

III¹³⁶), որը «ձգտում էր» բարեկամանալ նրա հետ¹³⁷: Նշենք նաև Գյովելեքի տեքստում Աշշուր աստծո հիշատակության փաստը, ինչը կարող էր լինել այդ ազդեցության ուղղակի գրսևորում՝ օտար աստծո պաշտամունքի գուցե և պարտադրված ներմուծում¹³⁸: Մենք նպատակ չենք դնում խորությամբ արծարծել այս հարցերը: Դա այլ ուսումնասիրության նյութ է, որքանով որ թույլ կտան փաստերը: Կարող ենք միայն նշել, որ ուրարտական պետության վերջին շրջանի պատմությունը, ըստ էության, դեռ չարդարվելու է:

Ստորև ներկայացնում ենք Ռուսա էրիմենայորու Գյովելեքի արձանագրության թարգմանությունը, փորձելով հնարավորինս հարադատ մնալ բնագրին.

ԴԿ

(1) Խալդայան մեծությունը (2) տերունական, ես¹ (ինքս¹) (եմ) Ռուսա (3) էրիմենայորդին, Խալդի (աստծո) ծառան: (4) Խալդայան զորությունը տերունական, (5) որը-ինձ երկրային ճշմարիտ (6) իշխանությունը¹ օժտեց¹ (7) որը-ինձ թագ¹ կամեցավ, (8) որը-ինձ արքայություն հզոր տվեց (9) (և) հասա (ես) արքայության, գահին հաստատեց-ինձ, (10) գայիսոն արքայական (բռնեց) ինձ-հետ, պարգևեց-ինձ (11) իշխանություն¹ ճշմարիտ նա-որը (12) իշխում է¹ ողջ տերությանը: (13) Պարգևեց-ինձ Խալդին, (իմ) տերը, (14) հաջողություն, (հաղթական) մարտ, ինչպես նաև առաջնորդությունը¹ (15) ամբողջ աշխարհի¹: Խալդայան (16) հրամանով (այս) ողջ կալվածքը¹ (17) քրմությունը¹ տվեցի: (18) Ռուսան, էրիմենայորդին, (19) ասում է. Քիլրանի (լեռան) առջևի հողերը (20) ամայի էին, (չկար) ոչինչ (21) ընդհանրապես՝ արտեր, խաղողուտ, այգի (22) չկար, ոչ էլ ջրանցք էր (23) այստեղ տարված: Ինչպես Խալդին-ինձ (24) հրահանգեց, ես կատարեցի (25) հզոր մեծագործություններ (26) այստեղ. Ռուսան ասում է, ջրերը կենարար¹ (27) դեպի-Ուրա (երկիր) ուղղեցի, (28) լցրեցի¹ այս ծովը, որ, իրոք¹, (29) չոր էր, (չկար) ոչինչ ընդհանրապես, (30) արտեր այստեղ չկային, (31) (32) այստեղ չկային, ոչ ջրանցք էր տարված, (33) ոչ աղբյուր այստեղ կար, (34) ոչ էլ երբևէ արքաներն էին կառուցել¹:

¹³⁶ Մոտեցումը, ըստ որի մ.թ.ա. 653/2թ. ասորեստանյան արքա Աշշուրբանապալի հիշատակած Ռուսան (Ուրսա), ոչ թե Ռուսա II-ն է, այլ Ռուսա III-ը, մասնագիտական գրականության մեջ հայտնի է վաղուց (տե՛ս S. K r o l l. IM. Bd. 34, S. 163; A. Ç i l i n g i r o ğ l u, M. S a l v i n i. The Historical Background of Ayanis, p. 22):

¹³⁷ D. D. L u c k e n b i l l. Ancient Records of Assyria and Babylonia, vol. 2. Chicago, 1927 (№ 871. 1035, 1046); E. F. W e i d n e r. Assyrische Beschreibungen der Kriegs-Reliefs Aššurbanaplis.— AfO, Bd. 8, 1932-1933, S. 188.

¹³⁸ Փաստը ժամանակաշրջանի համար եզակի չէ. սեպագիր աղբյուրներից հայտնի են այլ դեպքեր՝ Աշշուր աստծո պաշտամունքի ներմուծում, օրինակ, բաբելոնյան հոգևոր կենտրոններ (P. - A. B e a u l i e u. The Cult of AN.SAR/Aššur in Babylonia.— “State Archives of Assyria Bulletin”, vol. XI, 1997, p. 72f.): Այս պրակտիկան ժամանակին և մեծամասշտաբ կիրառել են ուրարտական արքաները՝ նվաճված տարածքների բնակչությանը պարտադրելով Խալդի աստծո պաշտամունքը (И. М. Д ъ я к о н о в. К вопросу о символе Халди.— ДВ, IV, Ереван, 1983, с. 190 сл.):

ՀԿ

(1) Ինչ-որ տեղ^Գ արքան սա (2) թող-ուղղի^Գ: Ռուսան ասում է. իրապես (3) զոհարերության կարգ հաստատեցի. երբ ջրերը (4) ծովային հոսեն^Գ, (մեկ) ուլ (5) Խալդի (աստծուն) թող-ողջակիզվի, (մեկ) ցուլ (և) հինգ ոչխար (6) Խալդի (աստծուն) թող-զոհարեմ, (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար թեյշեբա (աստծուն), (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար (7) Շիվինի (աստծուն), (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար Վարուրանի (աստվածուհուն), (8) (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար աստվածներին, (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար աստվածուհիներին), (9) (մեկ) ցուլ Ռուսայի (պահապան) (.....) աստծուն, (10) (մեկ) կով Ռուսայի (տիրուհի) աստվածուհուն, (11) (մեկ) կով Անիկու (աստվածուհուն), երեք ոչխար աստվածներին (12) ծովային, (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար Աշշուր (աստծուն), (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար (13) Նալանի (աստծուն), (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար Կուեռա (աստծուն), (14) (մեկ) ցուլ (և) (մեկ) ոչխար Ուրա (աստծուն), երեք ոչխար լեռներին (15) թող-մատուցվի, այս զոհարերութունը (թող մատուցվի), (16) երբ ջրերը հոսեն^Գ, երբ ջրերը (17) երկնքի թափվեն^Գ (մեկ) պարարտ ոչխար (և) (մեկ) ոչխար Խալդի (աստծուն), (18) (մեկ) ոչխար թեյշեբա (աստծուն), (մեկ) ոչխար Շիվինի (աստծուն), (մեկ) ոչխար Վարուրանի (աստվածուհուն), (19) (մեկ) ոչխար աստվածներին, (մեկ) ոչխար աստվածուհիներին), (մեկ) ոչխար Ռուսայի (20) (պահապան) (.....) աստծուն, (մեկ) ոչխար Ռուսայի (տիրուհի) աստվածուհուն, (21) (մեկ) ոչխար Անիկու (աստվածուհուն), (մեկ) ոչխար աստվածներին ծովային, (22) (մեկ) ոչխար Աշշուր (աստծուն), (մեկ) ոչխար Նալանի (աստծուն), (23) (մեկ) ոչխար Կուեռա (աստծուն), (մեկ) ոչխար Ուրա (աստծուն), (24) (մեկ) ոչխար լեռներին թող-մատուցվի: (25) Սրանք Ռուսայինիլի (քաղաքում) (26) թող-զոհարեմեն^Գ: Խալդյան զորությամբ (27) Ռուսա հրիմենայորդին, արքա է) հզոր, (28) արքա Բիայինիլի (երկրի), որի-համար (29) Խալդի (աստվածը), աստվածները (բոլոր) թագ^Գ (30) կամեցան փառահեղ^Գ, որը նաև (31-33. տողերն արձանագրված չեն):

УРАРТСКАЯ НАДПИСЬ ГЕВЕЛЕКА

ЕРВАНД ГРЕКЯН

Резюме

В статье приводится переиздание Гевелекской клинописной надписи урартского царя Русы, сына Эримены, с корректировками, а также с филологическими и историческими комментариями. Сопоставление материалов данной надписи с другими текстами урартской эпиграфики позволило уточнить значения некоторых урартских слов или предложить их новые интерпретации. Так, для урартского *tubarduni* предлагается значение "корона", "тиара" или "диаде-

ма", для абстрактного существительного *ueselase* – "власть", для идеограмного словосочетания *GIŠ LUGAL-tuḫini* – "царский скипетр", для глагола *urubi* – "налить", "наполнить", для слов *uri(ni)* – "владение", "именно", "страна", ^(LU)*ipsuše* – "предводитель", "предводительство" и т.д. Наблюдения, сделанные на эпиграфической основе, и изучение исторического фона приводят к заключению, совпадающему с мнением тех специалистов, которые высказывались в пользу родства между сыном Русы–Аргишти, и сыном Эримены–Русой. В статье дается полный перевод надписи.

THE URARTIAN INSCRIPTION OF GOVELEK

YERVAND GREKYAN

S u m m a r y

In the article is given the study and the republication of Gövelek cuneiform inscription of the Urartian king Rusa, the son of Erimena, with corrections, as well as with philological and historical comments. Comparison of materials in the given inscription with the other texts of the Urartian epigraphy has allowed to specify the precise sense of some Urartian words or to offer their new interpretations. So, for the Urartian word *tubarduni* is suggested the translation of "crown", "tiara" or "diadem", for an abstract noun *ueselase* – "power", "authority" or "rule", for the ideogram-made word-combination *GIŠ LUGAL-tuḫini* – "royal sceptre", for the verb *urubi* – "to fill", "to pour", for the words *uri(ni)* – "possession", "manor", "world", ^(LU)*ipsuše* – "leader", "leadership" etc. The supervision made on epigraphic basis and the study of the historical background inclines to a conclusion coinciding with the opinion of the researchers who emphasize the relationship between the son of Rusahi–Argišti and the son of Erimenahi–Rusa. In the article the full translation of the inscription is given.